№ 264 ՈՒՐԲԱԹ, 26 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 26 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 264

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցեն, և միևնոյն ժամանակ 40 կոպ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Հին բաժանորդներից խնդրվում է կցցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցեն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Գայիանեան Դպրոցի

Հոգաբարձութիւնը

ժողովի է հրաւիրում Մողնու ծխականներին այս կիրակի, նոյեմբերի 28-ին, ցերեկվայ ժամը 12-ին։ Հրաւէրը վերջնական է։

(ա.օ.) առ. 1317. 3—1

Թիֆլիսի Ժողովարան

Աւագների Խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների, որ ուրբաթ, դեկտեմբերի 3-ին 1910 թ., երեկոյեան ժամը 9-ին կը կայանայ

Երկրորդ ընդհանուր ժողով

քննելու մի քանի անտեսական հարցեր։ Ժողովարանի կանոնադրութեան § 42-ի հիման վրա՝ երկրորդ ընդհանուր ժողովը օրինաւոր է համարվում որքան անդամ էլ ներկայ լինի։

(ու.) առ. 1314. 2—1

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Մեր տաղանդաւոր աշխատակից Գր. Զալխուշեանի յօդուածները հայ հարուստների և նրանց զաւակների մասին ընդհանուր ուշադրութիւն գրաւեցին։

Զալխուշեանի շօշափած հարցը արծարծում է իսկապէս հին և նոր սերունդների հարցը։

Հայկական իրականութեան մէջ հին և նոր սերունդը սաստիկ ռելիէֆ, ցայտուն կերպով աչքի է ընկնում։

Մենք ունենք հին և նոր սերունդ, հայրերի և նրանց զաւակների սերունդ։

Մեր խօսքը բուրժուական և դրամատէր դասակարգի մասին է։

Ի՞նչ է ցոյց տալիս մեզ իրականութիւնը։

Հին սերունդը, հայրերի սերունդը, իր առհասարակ մեծամասնութեամբ տգէտ, կրթութիւնից զուրկ, բայց իր բնական խելքով, ուշիմութեամբ, չարքաշ և տոկուն աշխատութեամբ ձեռք է բերել և դիզել հարստութիւն։ Ի հարկէ, չէ կարելի ասել, թէ նա դիզել է հարստութիւնը միշտ բոլորովին մաքուր և ազնիւ ճանապարհով. չէ կարելի ուրանալ, որ յաճախ անարգ մամոնային տիրանալու համար նա գործ է դրել և կեղեքումն, և հարստահարութիւն, և վաշխառութիւն։ Սակայն չէ կարելի ուրանալ և այն ցայտուն փաստը, որ հին սերունդը մի կողմից տոկուն, չարքաշ աշխատութեամբ, միւս կողմից ոչ բոլորովին անարատ միջոցներով (միջոցներ, որոնք առևտրական կամ արդիւնաբերական առօրեայ ընթացիկ աշխարհում ընդունելի և անելի են համարված) դիզած հարստութիւնը չէր վատնում, չէր փչացնում և վերջնա՝ կամ այն է, որ արձագանք էր տալիս իր մարդկային սրտի, խղճմտանքի խորքից բարձրացած կոչին և յիշում էր բարութիւն, բարեգործութիւն կատարելու պահանջը, կարիքը, և կտակում էր մեծ գումարներ բարեգործական, եկեղեցասիրական, կրթական նպատակների իր մահից յետոյ, կամ այն է, որ նոյն իսկ իր կենդանութեամբ նուէրներ էր անում այդ նպատակով։

Եւ մեր ազգային բոլոր նշանաւոր հիմնարկութիւնները—Լազարեան ճեմարան, Ներսիսեան դպրոց, Գասպարեան անկելանոց, Սանասարեան դպրոց, Յովնանեան դպրոց, Երևանի թեմական դպրոց, Արղութեան դպրոց, Հայոց Բարեգործական Ընկերութիւն, Մարդասիրական Ընկերութիւն - իրանց գոյութիւնը և դրամագլուխները պարտական են գրեթէ բացառապէս հին սերնդի, հայրերի սերնդի ներկայացուցիչներին, որոնք կտակեցին առհագին գումարներ իրանց դիզած հարստութիւնից։

Դարձեալ հին սերնդի ներկայացուցիչներն են, որոնք նպաստեցին մեր մէջ գրականութեան, թատրօնի բարգաւաճման, վանքերի, եկեղեցիների, հիւանդանոցների, աղքատանոցների, մատենադարանների, վեհարանների կառուցման։ Յիշենք, որ Մխիթարեան հայրերի հոյակապ գրական գործերից շատերը իրանց հրատարակութիւնը պարտական են հին սերնդի ներկայացուցիչների դրամական նպաստներին և մեկենասութեան։

Այսպէս թէ այնպէս հին սերունդը, չը նայելով իր տգիտութեան և անկրթութեան, զգացել է միշտ մի ներքին բարոյական պահանջ իր դիզած հարստութիւնից մասն և բաժին հանել, յաճախ նոյն-իսկ շատ խոշոր բաժին ժողովրդին և մարդկութեան իր կտակներով և նուէրներով յօգուտ կրթական, լուսաւորական հաստատութիւնների և ձեռնարկութիւնների, յօգուտ աղէտեալների և տառապեալների։ Նա, հին սերունդը, դրանով մասամբ քաւել է իր գործած սխալները, կեղեքումները և հաշտեցրել ժողովրդին իր հետ, միևնոյն ժամանակ հանդարտացրել է իր ներքին խղճի աղաղակող բողոքը։

Եւ այդ հին սերունդը, հայրերի սերունդը անցել գնացել է կամ անցնելու գնալու վրա է, թողնելով իր ետևից նոր սերունդը, զաւակների սերունդը, որին նա թողել է և իր դիզած հարստութեան մեծագոյն մասը։

Տեսնենք այժմ ինչպէս վարվեց և վարվում է այդ նոր սերունդը, զաւակների սերունդը։

Հ. Առաքելեան

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Լոնդոն, 24 նոյեմբերի

Ընտրութիւնների երրորդ օրը կառավարական կուսակցութիւնը շահեց մի տեղ։ Ունիօնիստները Սենտելէտում յաղթեցին բանւորական կուսակցութեան. լիբէրալները գրաւեցին Սօուտսօրկ, Կօվէնտրի և Բերմլէյ ընտրողական վիճակները. կառավարական կուսակցութիւնը շահել է ընդամենը 13 տեղ, ունիօնիստները՝ 12։ Մինչև այժմ ընտրվել են 106 լիբէրալ, 146 ունիօնիստ, 20 բանւոր և 26 իռլանդացի նացիօնալիստ։ Մինիստր Բերնսը վերընտրվեց ձայների ճնշող մեծամասնութեամբ։ Կօրկում (Իռլանդիա) ընտրվեցին Օբրայէնը և Մորիս Խիլին։ Պարտութիւն կրեցին ռեդմօնդիստներ Վիլեամ Ռեդմօնդը և Ռոչը։ Մինչև երեկոյեան ժամը 5-ը ընտրվել են 110 լիբէրալ, 150 ունիօնիստ, 20 բանւոր, 32 ռեդմօնդիստ, Օբրայէնի 4 կողմնակիցներ։ Լիբէրալները շահեցին 10 տեղ, ունիօնիստները 12, բանւորական կուսակցութիւնը 33, Օբրայէնի կուսակցութիւնը 1։ Չեմբերլէն ընտրվեց Վօրչեստերշայէրում։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 24 նոյեմբերի

Կամչատկայի և համապետական հեռագրական ցանցի միջև ռադիօ-հեռագրական հաղորդակցութիւն բանալու առիթով Կայսրը բարեհաճեց Պրիամուրի գեն.-նահանգապետին հեռագրել. Կամչատկան Ռուսաստանի հետ միացնելու մասին ձեր հաղորդածը ինձ անկեղծ ուրախութիւն պատճառեց։ Շնորհակալ եմ այդ ծանր աշխատանքը կատարողներից։

ՆԻԿՈԼԱՅ

Ստոկհօլմ, 24 նոյեմբերի

Պետական պաշտպանութեան մասնաժողովի զեկուցագրի մէջ ցանկութիւն է յայտնված աւելի նպատակայարմարօրէն և համեմատական չափով բաժանելու համապետական ծախքերը և պետութեան պաշտպանութեանը յատկացվող գումարները։ Վերջինիս վրա գործադրվում է այժմ պետական եկամուտների խոշոր մասը։ Մասնաժողովը գտնում է, որ Շվէդիան առաջիկայ 8 տարիների ընթացքում պետական պաշտպանութեան համար կարող է ծախսել ամեն տարի 98 միլիոն. առաջարկում է կառավարութեանը ձեռք բերել 4 նոր զրահանաւեր, 4 հակա-ականանաւեր, հիմնել օդագնացութեան կայան, փորձեր կատարել թռչելու գործիքներով, աւելացնել զինուորացուների թիւը և ամրացնել ծովափեայ ամրոցները։ (Հ. Գ.)

Վիէննա, 24 նոյեմբերի

Ռուսաց ժողովրդական կուսակցութեան անդամ Մարկովը րէյխսրատում բողոքեց Գալիցիայում նրա կուսակցութեան վրա գործադրվող բռնութիւնների դէմ։ Հռետորը բողոքում է տեղական իշխանութիւնների դէմ։ Զագրէբի և Ֆրիդինգովի դատավարութիւնները ապացուցանում են թէ՝ ինչքան դժբաղդութիւններ են պատճառում դինաստիային և պետութեանը միապետութեան այդ իբր աւելի հաւատարիմ զաւակները անտեղի ոգևորութեամբ և անխղճութեամբ։ Հռետորը բերում է օրինակներ, որ Ժուլկէվում շրջանապետը կոպտութեամբ խախտել է օրէնքները՝ ժանդարմների ներկայութեամբ ապտակելով 30 գիւղացիների մի կալուածատիրոջ գանգատի համաձայն (բացագանչութիւններ)։ (Հ. Գ.)

Պարիզ, 24 նոյեմբերի

Ուղղիչ ոստիկանութեան դատարանը Լակուրին Բրիանի վրա յարձակվելու համար դատապարտեց երեք տարով բանտարկութեան։

Հոկտեմբերի 27-ին Տրիժէլի շրջակայքում մի հրացանաձիգ վաշտ փոխ-գնդապետի հրամանատարութեամբ ենթարկվեց Մասալիտի և Վադայի սուլթանների աւելի մեծ թւով զօրախմբի յարձակման։ Յարձակումը յետ մղվեց. թշնամին կորցրեց շատ սպանվածներ, ի թիւս որոց Տօջադինին։ Կան շատ վիրաւորներ, որոնց թւում՝ Վադայի սուլթանը։ Ֆրանսիացիների կորուստները շատ-շատ են։ Սպանվածների թւումն են մի գնդապետ և մի քանի օֆիցերներ։

Գաղութների մինիստրութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ փոխ-գնդապետ Մօլլը նոյեմբերի 26-ին 500 զինուորներով առանց կրակի մտել է Տրիժէլի։ Հետևեալ օրը Տրիժէլից դէպի հարաւ 5 կիլօմետր հեռաւորութեան վրա ճանապարհին փոխ-գնդապետը ենթարկվում է 5,000 տեղացիների յարձակման։ Մի և կէս ժամեայ կատաղի կռւից յետոյ տեղացիները, թողնելով 600 սպանվածներ և ժողովելով բազմաթիւ վիրաւորվածներ, փախան։ Ֆրանսիացիների կողմից սպանվել են երկու օֆիցեր, մի ֆէյտֆէբէլ և 70 զինուոր։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 24 նոյեմբերի

Նահանգական դատարանը «Новое Время»-ի խմբագիր Սուվօրինին դատապարտեց 100 րուբլի տուգանքի զօրքերի տեղափոխութիւնների մասին լուր տպելու համար։

Պետ. Դումայի Նախագահը Չերնօգօրիայի սկուպշտինայի նախագահից ստացաւ համակրանքի հեռագիր Տօլստոյի մահվան առիթով։ (Հ. Գ.)

Աստրախան, 24 նոյեմբերի

Քաղաքային վարչութիւնը փոթորկից վնասվածների օգտին յատկացրեց 10,000 րուբլի։ (Հ. Գ.)

Պետերբուրգ.—Տեխնիկական ընկերութեան ժողովը, մերժելով մահվան պատիժը վերացնելու մասին միջնորդութիւն յարուցելու առաջարկութիւնը, որոշեց միջնորդել թոյլ տալ վաճառելու Լ. Տօլստոյի բոլոր գրուածքները։

«Земщина»-ն Լ. Տօլստոյին արձան կանգնեցնելը համարում է եկեղեցու և ռուսաց սինօդի ոչնչացումն։

«Р. Знамя»-ն մի երկար յօդուածով ապացուցանում է, որ հոկտեմբերեանները, նացիօնալիստները և չափաւորները Ռուսաստանին սպառնում են պորտուգալական կատաստրոֆա։

Պետական Դումայի անդամ Չխեիձէի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՐԷ-ԻՑ

I

ՆԱՒՈՐԴՆԵՐ

Ազատ ու համարձակ դէպի հեռու աշխարհներ ուղղենք առագաստը...

Վեր ծառացիր հպարտ ու քաջլիր, արծաթեայ առագաստ... Դաժան ու անհամբոյր ծովին քո ուրախութիւնը հաղորդիր։ Խոր ծովի երկար ալիքները թռչում են փրփրած... Ծովի վրայով թռչող սպիտակ ուրուրները թռչում են բարձր։

Մեր անհամբոյր ճանապարհի յաղթանակը ցանկացիր մեզ, մայրենի երկիր... Ծով, սպառնալից ալիքներիդ շրջերը մեզ վրա բշիր։ Համր ծովում մենք աշխատանքից ու ջանքերից չենք վախենում։ Առագաստը ոլորվում է... Կը լռեն հայրենի գիւղում հառաչները։ Եւ կը սլանանք մենք, որպէս սպիտակ ուրուր, կրծքներս առաջ... Ընկերներ, համարձակ եղէք։ Անվիշտ ու անվախ... Անվեհեր առաջ...

Մենք կանանց և երեխաներին թողել ենք տանը. շատ հին ցանցեր ունեն նրանք կարկատելու։ Կանանց և աղջիկներին թողնում ենք տանը ցանցեր կարկատելու... Աշխարհում քիչ գեղեցիկ կանայք կան... Նրանք կը սիրենք... Նաւորդի կուրծքը պինդ է ու դաժան. կրծքի տակ, սիրտը պողպատից է... Գրկենք, ուղղենք առագաստը, ու նորից ճանապարհի կը լինենք։ Ուղին կանչում ու հրապուրում է մեզ իր փոթորկոտ գիշերների գեղեցկութեամբ... Ուղին՝ լուսաւորված գեղեցիկ աստղերի վառ փայլով...

Աստղերը վառվում ու շողում են գիշերային խաւարում։ Մեզ, նաւորդներիս, համր ծովում ոչինչ չէ վախեցնում։ Համարձակ ուղղենք մենք կարող առագաստը ու լողանք... Թէ գիշեր, թէ ցերեկ, մեր սահող նաւը պատենք սպիտակ ալիքներով։ Եւ ազատ թևերի վրա համարձակ առաջ սլանանք. բաւականութեան, կռւի և փորձանքների գեղեցկութիւնը կանչում է մեզ։ Հեռու աշխարհում շատ հրաշքներ և տանջանքներ կը տեսնենք։ Մենք կը զգանք մոռացված ընտանիքի թառաչներն ու հառաչները։

Մենք նաւորդներ ենք, ոչնչից չենք վախում, ոչինչ չենք ուզում... Հպարտ ու ազատ, որպէս ծովային ուրուր, դէպի ծովը ենք թռչում։ Եթէ դժբաղդութիւն պատահի, փոթորիկը նաւը խորտակէ... Նոր, անվախ ամպեր մեզ ափ կը հանեն։

II

ԵՐԱԶՈՒՄ

Երազ տեսայ. ես շղթայված էի... Երազում տեսայ, որ ես շղթայված էի ժայռին։

Ազատ ծովը արձակ-համարձակ գնում էր դէպի հեռու, հեռու կողմեր։ Իսկ ես շղթայված էի և անմիտ բարկութեան պոռթկումով, ապարդիւն զրնգում էին շղթաներս։ Իւրաքանչիւր շարժումի ժամանակ սուր շղթաները խցկվում, վիրաւորում էին մարմնիս մասերը։ Ձեռքերս մենամարտողի ազատ ու հպարտ շարժումով վեր բարձրացնելով, ես ճչում էի ծովին. «Ազատութիւն, փրկիր»։

Սլացող թռչունները նենգօրէն ծիծաղում էին իմ անմիտ գոչիւնի վրա, խլացնելով նրան իրանց կախարդիչ ու զուր ձայներով, նրանք երգում էին.

— Օ՛, ծով, մի լսիր դու ստրուկի հառաչներին... ինչի՞դ են պէտք ազատութեան համար եղած այդ պաղատանքները, մարդկանց տանջանքները...։ Մենք քեզ երգեր կերգենք, ուր ցնորքներն ու վարդերը միախառնվում էին անդորր գեղեցկութեամբ...

Կերգենք մեր պարզ ու նուրբ տանջանքների, մեր խաղաղ ձգտումների մասին։ Իսկ մարդիկ... Թող նրանք տառապեն ու պատռվեն իրանց ծանր կապանքներում։ Թող նրանց մարտակոչերը տարածվեն ու մեռնեն առանց արձագանքի... Նրանք մեզ պէտք չեն։ Մեր հանգստութեան մէջ ողջունող ու մեղմիկ երգեր են տարածվում և՛ ցնորքների, և՛ երազների, և՛ խոպոպիքները տարածող ամպերի և ծաղիկների մէջ թմրած ցողիկի մասին։

Փոթորկոտ ծովին այսպէս էին երգում թռչունները։ Փոթորկոտ ծովին իմ մութը բանտից նորից ու նորից գոչում էի ես։ Ծանր շղթաներս թափահարելով, սուրբ ազատութեան պատկերը դուրս կոչելով, փոթորկոտ ծովին ես գոչում էի.

— Թռչուններին մի լսիր ազատ ծով, հան իմ շղթաները։ Դժբաղդութեան րոպէն, վիշտը կանցնեն և ես իմ երգերը կերգեմ։ Իմ երգերում ծիածանի նման տարածված է իմ ուրախութիւնը։ Իմ երգերում փայլում է իր գեղեցկութեամբ հայրենի երկիրը։ Սքանչելի ուժով լսվում են երկրի երջանկութեան երգերը.. Ծով, ո՜, ազատ ծով, միայն, միայն հանիր իմ շղթաները։

III

ՑՆՈՐՔՆԵՐ

Զգվում են ցնորքները, երազկոտ ցնորքները, որպէս մարգարտի սկւուն երկար շարք... Զգվում են ցնորքները...

Խեղդուկ գիշերը թագնված պատուհանի ետևում լցնում է իմ սիրտը, իր թոյնը... Այդ սիրտը վաղուց է կոտրվել և անիծել կեանքն ու վիճակը։

Իմ ցնորքները դուրս են թռչում, ներս գալիս, խաղաղ սլկվելով... Թագնված գիշերը շշնջում է ինձ նենգօրէն.—«Այդպէս ապրել չի կարելի։ Դէն շպրտիր աշխարհային դաւերը, տանջանքներն ու սէրը... Իմ շուրթերի համր համբոյրի քաղցր զգուանքով մեռիր հանդարտ։ Որպէս քո քոյրը, կը գրկեմ ես քեզ... Խաղաղ կը մեռնես։ Առանց տառապանքի, ճիչերի ու ցաւերի, մահվան գիրկը կը գնաս»։

Զգվում են իմ քմահաճ ցնորքները, հոգուս մէջ պատկերներ գծագրելով... Մարգարտեայ գեղեցիկ շարքը թոյլ երերում է թմրութեան մէջ։ Գիշերը թագնված, անձայն ծիծաղում է այնտեղ, պատուհանի ետևում։ Ցնորքները թռչում, հեռանում ու հիւսվում են, որպէս անխօս լեռ։

Գիշերը մտենում է, ցնորքները փոխում, կեանքի են կանչում, նորից կեանքի, ոյժի և ճշմարտութեան մասին են հաւատով երգում։

— Նայիր մարդկային տառապանքներին... Ո՞րքան շատ է չորս կողմում։ Փոքրոգութիւնն ու տատանումը հեռացրու, սիրելի ընկեր, և հաւատալով ինքդ քեզ, ամրացիր յոյսով, խեղդիր հոգուդ տանջանքները... Պարզ և երկաթեայ ամուր շղթերով կուրծքդ փոթորկից պաշտպանիր... Մանկութեան ժամանակ քեզ ժպտացել է արևը երկնքից։ Անոյժ ու անսքանչ արեգակից յետոյ միայն դարձրիր հայեացքդ։ Ուղիղ, զինուորական շարքով գնացող մարդիկ խստօրէն կանչեցին քեզ իրանց շարքը. դու գնացիր և չէիր հաւատում, ու չը հաւատալով, կորցրեցիր նրանց հետքերը։ Ու էլ մի փնտրիր այն հետքերը. քմահաճ սիրտդ տար կեանքի մէջ առանց կապանքների։

Զգվում են իմ մէն-միայնակ ցնորքները, մութ գիշերում, որպէս փայլող մարգարիտներ... Աստղերի հանգչող, խորունկ ագործը քննող մաս[illegible]ովը, Թիֆլիսից պահանջել է պրիստաւ ..վստուայի ամբողջ դատական գործը, որ մեղադրվում է Զխէիձէին կեղծ փաստաթղթեր տալու մէջ։ («Б.»)

—

Մոսկվա.—Քաղաքային վարչութիւնը դպրոցական կարիքների համար մտադրվում է կնքել 27 միլիոն րուբլու փոխառութիւն։

Հոգևոր ճեմարանի ուսանողները սովադուլ յայտարարեցին վատ կերակրի պատճառով։

Տեղի ունեցան դարձեալ մի քանի երեկոյթներ Լ. Տոլստոյին նուիրված, հոծ բազմութեան ներկայութեամբ։ („Б.“)

—

Օդեսսա.—Բժիշկ Տոմաշևսկին 200 հազար ր. կտակեց Օդեսսայի և Կիևի համալսարաններին, իսկ ընտանիքին միայն 60,000 ր. („Б.“)

—

Մենք հաղորդեցինք, որ ֆրանսիական երդուեալների դատարանը Ռուան քաղաքում մահվան պատժի դատապարտեց բանւորական դաշնակցութեան քարտուղար Դիւրանին, իբրև դրդիչի սպանութեան, և որ այդ վճիռը մեծ բողոքներ առաջ բերեց սօցիալիստների շարքերում ու ջերմ բանակռիւ Փարիզի մամուլի մէջ։

«Տան» լրագիրը ողջունում է դատարանի վճիռը և այդ դատավճռի մէջ տեսնում է դէպի մարդկային կեանքը յարգանք ունենալու անհրաժեշտութեան հանդիսաւոր հռչակումը։ «Անարգված բանւորները,—ասում է լրագիրը,—կողջունեն Ռուանի վճիռը իբրև փրկութիւն»։

Սակայն Ժօրէսը «Հումանիտէ» թերթի մէջ զայրոյթ է արտայայտում այդ դատավճռի առիթով և ասում է, որ նա թելադրված է ռէակցիոնական բուրժուազիայի, պրոլետարիատի դէմ տածած վրէժխնդրութեան զգացումով։ Ժօրէսը միևնոյն ժամանակ խոստովանում է, որ բանւորական դաշնակցութեան «դատաստանը», որ մահվան պատժի է ենթարկել շտրէյկբրեխերներին, մի զզվելի բան է։ Ժօրէսի խօսքով, շտրէյկբրեխերի սպանութիւնը կատարվել է արբած բանւորների շրջանում, որոնք չէին հասկանում իրանց գործողութիւնների յանցանքը։

Հէնրի Բերանժէն «Ակսիօն» թերթի մէջ գրում է, որ Ռուանի դատարանի հետ միասին հասարակական կարծիքն էլ պատրաստ է դատապարտել անարխիստական տեռրորը, որ թագնված է սինդիկալիզմի ծոցում և որ որոշ չափով տեռրորի համար պատասխանատու է Ժօրէսը իր բարեկամների հետ։

Դոկտօր Կրիպէնի գլխատումը

Անգլիական դատարանը, ինչպէս գիտենք, գլխատման դատապարտեց դոկտոր Կրիպէնին։ Չը նայելով որ վերջինս միշտ պնդում էր իր անմեղութեան վրա, բայց դատավճիռը իրագործվեց և նորերս Կրիպէնը գլխատվեց։ Գլխատման նախորդ օրը նա մի նամակ գրեց իր սիրուհուն, միսս Լընէվին, որի մէջ երդվում է նորից իր անմեղութեան համար և յոյս է յայտնում, թէ միշտ իր անմեղութիւնը կը ճանաչվի և ամբողջ աշխարհը կիմանայ, որ իրան զուր տեղ գլխատեցին։ Նա ասում է, որ ամենևին գաղափար չունի, թէ ուր է անհետացել իր կինը, և նկուղում գտնված դիակը իր կնոջ դիակը չէ, բայց թէ ում դիակն է, չը գիտէ նոյնպէս։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Կ. Պոլիս, 24 նոյեմբերի

Երիտասարդ-թիւրքերի մեծամասնութեան ֆրակցիայի նիստում վճռվեց օպպօզիցիային ազատութիւն տալ քննադատելու կաբինէտը։ Վկայվեց, որ քննադատութիւնը լուրջ շարժառիթներ կաբինէտի դէմ չը տուեց, որի պատճառով կաբինէտի շանսերը մեծամասնութեան վստահութիւնը ունենալու տեսակէտից ամրացան։

Դրուզները շրջապատված են զօրքերով. երկրորդ օրն է կռիւը շարունակվում է։ Պաշարվածներին օգնելու համար հարաւից մօտենում է մեծ զօրախումբ։

Սալմաստում կարգը վերականգնվեց։ Սալմաստի պարսից նահանգապետը այցելեց թիւրքաց նահանգապետին և յայտնեց, որ պարսից և թիւրքաց քիւրդերը հաշտվել են և պարտաւորվել են դադարեցնել փոխադարձ կռիւները։

Պալատ։ Յոյն Բուզիօսը, շարունակելով երկուշաբթի օրը սկսած ճառը, յարձակվում է կառավարութեան և երիտասարդ-թիւրքերի վրա հակայունական բոյկոտ կազմակերպելու համար, որ շատ վատ ազդեց հէնց թիւրքերի վրա էլ։ Նրան ընդհատում են վէզիրը, ներքին գործերի մինիստրը և մեծամասնութեան անդամները։ Ներքին գործերի մինիստրը և հռետորը փոխանակում են վիրաւորական դարձուածքներ (ուժեղ աղմուկ)։ Հռետորին հարկադրում են յետ վերցնել իր խօսքերը։ Բօլգարացի Վլախօվը մեղադրում է կառավարութեանը բօլգարներին ջարդելու մէջ, որ յարուցանում է նոր աղմուկ ու հերքումներ։ Հայ Վարդգէսը և բօլգարացի Դալչէվը շարունակում են քննադատել կառավարութեանը։ Առաջինը փաստեր է բերում Փոքր-Ասիայում տիրող աղքատութեան և քաղցածութեան մասին ոչ միայն հայկական, այլ և քիւրդական գիւղերում. երկրորդը նոր մանրամասնութիւններ է հաղորդում Մակեդօնիայում կատարվող հալածանքների և ճնշումների մասին։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 24 նոյեմբերի

Նախկին շահը ընտանիքով մեկնեց Մերան։ (Հ. Գ.)

—

Լայպցիգ, 24 նոյեմբերի

Պետական գերագոյն դատարանը հաստատեց կամմերհերիխտի վճիռը, որով պետական բանկը պարտաւորվում է յանձնել նախկին սուլթան Աբդիւլ-Համիդի գանձերը։ Պետական դատարանը չընդունեց այն ենթադրութիւնը՝ թէ սուլթանը հարկադրված պահանջ է գրել յետ տալու իր գանձը։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս.—Դաւրանի մօտերը, Անատոլիայում, տեղի ունեցան ընդհարումներ կառավարական զօրքերի և 10,000 հոգուց բաղկացած դրուզների և զօրախմբի միջև։ Ապստամբները կորցրին 700 սպանված։ Զօրքերին չաջողվեց ցրել զօրախումբը։ Դրութիւնը Վերին Ալբանիայում վերստին սպառնալի կերպարանք է ստանում։ Ուղարկված են նոր զօրքեր։ („Б.“)

—

Պարիզի լրագիրներին հաղորդում են, Լոնդոնից, որ երբ Պոտսդամում կայացած տեսակցութեան ժամանակ, գերմանական կայսրութեան կանցլերը և ռուսաց արտաքին գործերի մինիստրը հետևեալ համաձայնութիւնն են կայացրել։ Ռուսաց կառավարութիւնը պարտաւորվում է կառուցանել երկաթուղային գիծ Թեհրան-Խանաքէն, որպէսզի դրանով գերմանական ապրանքների փոխադրութեան համար, որ այժմ կատարվում է Բաղդադի երկաթուղիով, ճանապարհ բանայ։ Միւս կողմից, գերմանական կառավարութիւնը պարտաւորվում է թոյլ չը տալ Տրապիզոն-Թաւրիզ երկաթուղագծի շինութիւնը, որը վտանգաւոր կը լինի Անդրկովկասեան երկաթուղու համար։

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 10 նոյեմբեր

Ներքին գործերու մինիստրը շրջաբերականով մը զգուշացուց բոլոր գաւառական պաշտօնատարներուն ինքզինքնին պաշտպանել այսուհետև, հրապարակային ամբաստանութեանց առջև, դատարաններով։

Մինչև ցայսօր՝ արդարացումները կըլլային միայն պարզ հերքմնագիրներով, և ատով կարելի կըլլար ծածկել ամեն ստութիւն, ամեն նենգութիւն, նոյն իսկ ամեն ոճիր։ Սկզբունքը սա էր, թէ կառավարութիւնը իր կարգած ստորադաս պաշտօնէութիւնը վեր կը համարէր ոևէ ամբաստանութենէ։ Այսօր, ներքին գործերու մինիստրին պաշտօնագրովը, ատոնք կիջնեն հասարակ մարդոց շարքին մէջ, իրենց անիրաւութեանց պատասխանատուն պիտի ըլլան դատարանի առջև, և պարտաւոր են այդ միջոցով միայն իրենց արդարացումը ձեռք բերել հանրութեան առջև։

Յոյն պատրիարքարանի և բուլղար էկզարքարանի մէջ համաձայնութեան խօսքեր կան հրապարակի վրայ։ Ճիշդը ըսելով, ասկէ առաջ ալ մէջտեղ ելած էր այդ լուրը, երբ անգամ մը էկզարքը փափագ յայտնած էր այցելութեան երթալ Յովակիմ պատրիարքի, որու նկատմամբ,—ըսած էր,—համակիր զգացումներ ունեցած է միշտ։

Իսկ այդ լուրը, այժմ նորութիւն ստացաւ բուլղար պատգամաւորի՝ Բանչէ Զօրէֆի այցելութիւնովը, որ տուաւ յոյն պատրիարքին և շատ սիրալիր մեծարանքներով ընդունուեցաւ։ «Թանին» այդ մերձեցումի համար խօսելով, կը ջատագովէ ցեղերու մէջ համերաշխութեան գաղափարը. բայց կըսէ թէ օտարին ազդեցութեան ներքև պէտք զգացուած է այդ կարգի համերաշխութեան մը։ Ամեն պարագայի մէջ սակայն, իր բառերով, երիտասարդ թիւրքերը ուրախութեամբ պիտի տեսնեն թէ, քառասուն տարիէ ի վեր, առաջին անգամն է, որ բուլղարներն և յոյները սկսած են իրարու մօտենալ։

«Իգդամ» կը գրէ թէ այդ համաձայնութեան մէջ յոյն տարրն է, որ անհերքելիօրէն պիտի շահուի։ Չընդունիր թէ այդ մերձեցումը հիմնուած ըլլայ եղբայրօրէն ապրելու փափագին վրայ։ Անտարակոյս՝ վարչական առաւելութիւններ ձեռք ձգելու շարժառիթն է բուն պատճառը։ Ու ի վերջոյ՝ փափագ կը յայտնէ, որ վարչապետը ջանայ միջոցներ գտնել՝ կարելի եղածին չափ երկրին տարրերուն զգացումները տաք պահելու հայրենիքին հետ։

«Ենի Կազէթա» կը գրէ բոլորովին տարբեր ոճով մը։ Համաձայնութիւնը, յոյներու և բուլղարներու մէջ, եղբայրական սիրով կատարուած չի տեսներ, ընդհակառակն՝ արդիւնք անջատական կարգ մը միտքերու։ Ու շատ ալ ցաւ կը յայտնէ այդ մասին, որովհետև կըսէ. «Երբ այլ և այլ տարրեր՝ անջատական ու ազգայնական հոսանքներու ուժ տան, կառավարութիւնն ալ, կամայ ակամայ, հեռանալով մարդասիրական հայեացքներէ, քիչ շատ բռնութիւն գործ պիտի դնէ՝ իր գոյութեան պահպանմանը սպառնացող վտանգներուն դէմ»։

Ասկէ առաջ լսուեցաւ թէ ըստ պատրիարքի յայտարարութեանը, ինք ստիպուած է մերձեցման ուժ տալ մեծ պետութեան մը ստիպումին վրայ։ Իսկ այսօր ալ գրուած էր հրապարակաւ Յովակիմ պատրիարքի բերնով թէ «յոյն և բուլղար եկեղեցիներու կրօնական անհամաձայնութիւնը բառնալու խնդիր չկայ բնաւ։ Այս մասին յոյն մամուլին ըրած հրատարակութիւնները զարմանք կը պատճառեն ինծի։ Մանաստրի պատգամաւոր՝ Բանչէ Զօրէֆ էֆ.-ի այցելութիւնը պաշտօնական հանգամանք չունէր։ Կատարուած խորհրդակցութիւնները կը վերաբերեն ոչ թէ կրօնական անհամաձայնութեան, այլ, կառավարութեան հանդէպ իրենց իրաւունքներու և առանձնաշնորհումներու պաշտպանութեանը համար, համաձայնութիւն մը կնքել յոյներու և բուլղարներու միջև»։

Աշնան վերջին ամիսը շատ նպաստաւոր եղաւ խօլերայի միկրօբներու զարգացմանը։ Կրթական մինիստրը, պաշտօնագրով մը, հրամայեց անխտիր փակել մայրաքաղաքի բոլոր վարժարանները։

Զոհերը մեծ մասամբ աւելի զինուորներն են։ Ու ատ առաջ եկաւ ռազմափորձերէն։ Կըսուի՝ թէ երբ՝ նոյն առթիւ, զինուորները, հին սովորութեան համեմատ, ազատութիւն ունեցան անարգել մուտք ունենալ այգիները, պարտէզները, կերած են խակ ու սահուն պտուղներ հաւասարապէս։ Անզգուշութիւնն ալ միւս կողմէ, և ահա դիւրին զոհեր խօլերայի միկրօբներու։

Այս մաքրագործութիւնը շատ գէշ տեսակէտէն, որ տեղի կունենայ. զոհերն են աղքատները, տգէտները գլխաւորաբար, որոնք, Աստուծոյ անունով, կուտեն անզգուշաբար, կը հաղորդակցին տգիտօրէն, ոչ միկրօբէն կուզեն բան մը հասկանալ, և ոչ ալ տրուած յորդորներու ականջ կը կախեն։ Մզկիթներու մէջ աղօթքներու սկըսուած է։ Չենք գիտեր թէ աղօթքով կռիւը պիտի յաջողի՞ արդեօք։ Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—

Չորեքշաբթի, նոյեմբերի 24-ին, տեղի ունեցաւ Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկ. նիստը։

Նախագահ Ա. Արղութեան նախ քան պարապմունքներին դիմելը, խօսեց Լէվ Տոլստոյի իբրև մարդկութեան գերագոյն ներկայացուցչի մէկի մասին և առաջարկեց յարգել նրա յիշատակը ոտքի կանգնելով։

Այնուհետև Ա. Քալանթար կարդաց իր զեկուցումը, որը բաղկացած էր երեք մասից և վերաբերում էր կենդանաբուծութեան խնդիրներին։

Զեկուցանողը հաղորդեց մանրամասն տեղեկութիւններ Պետերբուրգում տեղի ունեցած համառուսական կենդանաբուծական ցուցահանդէսի մասին և ցոյց տուեց, թէ որքան մեծ առաջադիմութիւն են արել Ռուսաստանի մի քանի տեղերում գիւղացիները անասնապահութեան մէջ և ստեղծել տեղական կենդանիներից այնպիսի նախիրներ, որոնք իրանց արդիւնաբերութեամբ մրցում են արտասահմանեան կենդանիների հետ։

Երկրորդ մասում զեկուցանողը առաջ բերեց կենդանաբուծական համագումարի քննած խնդիրները և նրանց առիթով կայացրած որոշումները։ Զեկուցանողը ծանօթացրեց ներկաներին այն մեծ կազմակերպչական գործունէութեան հետ, որին ձեռնարկել են թէ իրանք գիւղատնտեսները, թէ զեմստվօն և թէ կառավարութիւնը՝ բարձրացնելու կենդանաբուծութիւնը Ռուսաստանում։

Երրորդ մասում Ա. Քալանթար ներկայացրեց նպատակայարմար գործունէութեան մի ծրագիր Կովկասի կենդանաբուծութիւնը բարուոքելու և բարձրացնելու համար։

Ժողովը որոշեց շօշափված խնդիրների առիթով խնդրել Ընկերութեան կենդանաբուծական բիւրօյից մշակելու բարուոքումների մի սիստեմ և յայտնեց շնորհակալութիւն զեկուցանողին։

Լ. ՏՈԼՍՏՈՅԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

—

Տոլստոյն բոլորովին բացառիկ երևոյթ էր, որովհետև նրա առջև դրված խնդիրը՝ միտքի հարցեր լուծելն էր, քրիստոնէութիւնը լոկ ձևական խօսք լինելուց՝ իրական հասկացողութիւն դարձնելն էր, այդ հասկացողութիւնը Աւետարանի ոգուն յարմարեցնելն էր, յարմարեցրածը կեանքի մէջ գործադրելն էր։ Իսկ գործադրելու համար անհրաժեշտ էր տալ ժողովրդին անձնական օրինակը։

Ու Տոլստոյն, մոռանալով և ուրանալով իր անձը՝ մտաւ ժողովրդի մէջ։ Նրա արած այն փորձը, որ պահանջում էր հրաժարվել աշխարհիկ վայելչութիւններից և ապրել այնպիսի կեանքով, որի հիմքը լինէր՝ բարձր գաղափարներ ու ճշմարտութիւն փնտռելը,—այս բոլորը Տոլստոյի անուան հմայքը հասցրին լեգենդայական չափերի։

Եւ, իրաւ. ապրել ճոխ փարթամութեան մէջ, կրել «կոմս» փառաւոր տիտղոսն ու, մի գեղեցիկ օր, հրաժարվել այդ բոլորից՝ միմիայն կրօնական հարցեր լուսաբանելու նպատակով,—համաձայնեցէք, որ դրա համար հարկաւոր էր՝ Քրիստոսին հետևելու չափ վճռականութիւն։ Ու նա ձեռք բերեց այդ վճռականութիւնը, գործ դնելով իր անձի ու մտքի վրա ամենախիստ ճնշումներ։

Ո՛վ մեզնից, հասնելով որոշ կատարելութեան, .. չէ զբաղվել կրօնական հարցերով։

Ի հարկէ, զբաղվել ենք, յաճախ նոյնիսկ գլուխ կոտրելով. բայց, չը կարողանալով ստանալ որոշ պատասխան, յուսահատվել ենք ու դադարել մտածելուց։

Տոլստոյն եկաւ՝ մինչև վերջը հասցնելու այդ այրող հարցի լուծումը։ Ու նրա ջանքերը պսակվեցին աջողութեամբ։ Ուղիղ է լուծել հարցը թէ սխալ, դա երկրորդական բան է։ Բայց որ նա որոշ սիստեմի է բերել իր որոնումները, դրանում խօսք չը կայ։

Համոզվելով որ քրիստոնէական ուսումն անխզելիօրէն կապված է կեանքի միակ իմաստի՝ այն է ուրիշների համար ապրելու մէջ, Տոլստոյը եկաւ այն եզրակացութեան, որ քրիստոնէութեան մէջ կայ ճշմարտութիւն, որ քրիստոնէութիւնը ամենամաքուր ու բարձր կրօնն է, որից բարձր դեռ չէ հասել մարդկային բանականութիւնը։

55 տարեկան հասակում Տոլստոյը ասում էր. «Սրանից հինգ տարի առաջ ես հաւատացի Յիսուսի ուսմանը, ու յանկարծ կեանքս փոխվեց. խաչված աւազակի պէս, ես էլ հաւատացի նրա քարոզութեանն ու... փրկվեցի»։

Այս պատճառով ես էլ աւելացնում եմ՝ «փա՛ռք ճշմարտութիւնը փնտռողին, պատի՛վ ճշմարտութիւնը գտնողին, խոր յարգանք՝ ճշմարտութիւնը պաշտպանողին»։

Տոլստոյներն անմահ են։ Է. Ք. Ն.

ՏՈԼՍՏՈՅԻ ԴԻՄԱԿԱՂԱՊԱՐԸ

—

Ներկայումս Եալտայում օրվայ հերոսը՝ Տոլստոյի դիմակաղապարը հանող քանդակագործ Ս. Մերկուրօվն է։ Ամենքը դիմաւորում են նրան, սղմում և ի սրտէ երանի տալիս, որ նա բաղդ ունեցաւ մեծ հանգուցեալի երեսը տեսնել ու նրա պայծառ ճակատը համբուրել։ Թէև մայրաքաղաքի թերթերում արձագանք գտան Մերկուրովի պատմածները Լ. Տոլստոյի դիմակաղապարի հանման մասին, սակայն աւելորդ չեմ համարում երկու խօսքով արձանագրել այստեղ յարգելի արձանագործից լսած մեր տեղեկութիւնները։

— Ինչպէս եղաւ որ գնացիք։

— Հեռագրով կանչեցին, իսկոյն ճանապարհ ընկայ։

— Լրագիրներում ուրիշ անուն էր հաղորդված, իբրև թէ...

— Ոչ, այն սխալ էր, միմիայն ինձ էին կանչել դիմակաղապարը հանելու։

— Ձեր տպաւորութիւնները...

— Ներս մտայ սենեակ, սիրտս թրթռում էր, տեսնում եմ մահճակալի վրա պառկած էր Տոլստոյը, գլխի մօտ լուռ նստած էր Սօֆիա Անդրէևնան, իսկ չորս կողմը կանգնած էին գիւղացիները. ինձ որ տեսան՝ խառնվեցան, տեղ տուին, և ես սկսեցի աշխատել. միտքս ընկաւ Խրիմեան Հայրիկը։ Տոլստոյի դիմակաղապարը հանելու ժամանակ կարծես թէ Հայրիկն էլ աչքիս առաջն էր։

— Դիմակաղապարը երևի կընծայէք Տոլստոյի անուան թանգարանին։

— Առ այժմ կը պահեմ։

— Լրագիրներում կարդացինք, իբրև թէ Տոլստոյի գագաթի վրա ինչ որ խորշեր էք նկատել։

— Այո, երբ տրորեցի գլուխը, տեսնում եմ գագաթի վրա փոսեր կան. հետաքրքրվեցի, տեսայ որ իսկապէս գագաթնոսկրի վրա իրարից քիչ հեռու երկու կլոր փոսեր կան, իսկ նրանց մէջ տեղը մի կոշտ ուռուցք։

— Երբ հանում էի դիմակաղապարը, յանկարծ քովս կանաչեայ մի փոքրիկ պսակ տեսայ, վրան կպցրած հասարակ ժապաւէնի վրա ձեռքով գրված. «Отъ крошки Льва Николаевича Дѣду Льву Николаевичу». ինձ պատմեցին, թէ նոյեմբերի 7-ին, Տոլստոյի վախճանման օրը Աստապովոյի կայարանում Նիկոլայ անունով մի ծառայող արու զաւակ է ունենում, նոյն օրը կնքում է և անունը դնում Լէվ, և ահա այդ նորածին Լէվ Նիկոլայէվիչից ծնողները փոքրիկ պսակ են դնում Տոլստոյի վրա։

— Թաղման րօպէին այնտեղ էիք։

— Ոչ, թէև ինձ հրաւիրեցին Եասնայա-Պոլեանա գնալ, դժբաղդաբար չը կարողացայ գնալ. նախ դիմակաղապարը պէտք էր առանձին վերջացնել, բացի դրանից ուրիշ հանգամանքներ ստիպեցին ինձ շտապով վերադառնալ։

— Կարելի՞ է, արդեօք, Տոլստոյի դիմակաղապարը տեսնել։

— Ոչ, առ այժմ չեմ կարող ոչ ոքի ցոյց տալ։ Ցար. Խաչատրեան

Եալտա, 18 նոյեմբերի

ԴԱՐՁԵԱԼ ԱԲՈՎԵԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՄԱՍԻՆ

—

Բագուի Կուլտուրական Միութեան գեղարուեստական սեկցիայի նախագահ Ցակ. Տէր-Գէորգեանը առիթ է տալիս ինձ կրկին մի քանի խօսք ասելու Աբովեանի արձանի վերաբերեալ։

Միանգամայն համամիտ եմ Տէր-Գէորգեանի կարծիքին, որ ցանկալի է տեսնել հայ հեղինակի արձանը հայ արուեստագէտի ձեռքով պատրաստված։ Սակայն պնդում եմ, որ գործը լաւ աջողեցնելու համար պէտք է կոնկուրսի հրաւիրել հէնց այդ հայ արուեստագէտներին, և կոնկուրսը պէտք է յայտարարվի լրագիրների միջոցով և ոչ այն ձևով, ինչպէս արել է Բ. Հ. Կ. Միութիւնը, այսինքն դիմել է վեց հոգի հայ արձանագործներին պրօէկտները կազմելու համար։

Տէր-Գէորգեանը խնդրում է ինձ յայտնել՝ բացի վերոյիշեալ վեց հոգուց, կրկին նոր հայ արձանագործների անունները, որպէսզի նրանք էլ հրաւիրվեն։

Այս առաջարկութեանը բաւարարութիւն տալուց հրաժարվում եմ, որովհետև այդ հրաւէրի եղանակի հակառակ եմ և հակառակ լինելու ամուր հիմք ունեմ։

Առաջարկում եմ կոնկուրսի հրաւիրել լրագիրների միջոցով բոլոր հայ արուեստագէտներին և ոչ միմիայն արձանագործներին։

Տէր-Գէորգեանին, իբրև գեղարուեստական սեկցիայի նախագահին, անշուշտ յայտնի կը լինի, որ քանդակագործներից զատ կան և այնպիսի նկարիչներ, որոնք նմանապէս ընդունակ են արձանի պրօէկտներ կազմելու։ Ցայտնի բան է, խօսքս ինձ նման միակողմանի պէյզաժիստների մասին չէ, որոնք գործ ունեն բացառապէս բնութեան հետ։

Կուլտուրական Միութիւնը վերին աստիճանի համակրելի գործ է կատարում Աբովեանին արձան կանգնեցնելու նկատմամբ, և կը ցանկայի, որ նա ունենայ կատարեալ աջող վախճան։ Այդ է ինձ դրդող միակ պատճառը, որ կողմնակից եմ կոնկուրսի։ Դրանով միջոց կը տրվի բոլոր կարող և ցանկացող հայ արուեստագէտներին մասնակցելու, հետևապէս պրօէկտների թիւը մեծ կը լինի, որ ցանկալի է։ Ժիւրին նրանց միջից կընտրի լաւագոյնը։

Տէր-Գէորգեանը ի միջի այլոց առաջարկում է ինձ «փոխանակ արձանի վերաբերեալ թէօրէտիկ հարցերը վերլուծելու» յորդորներ կարդալ հայ հասարակութեան «սթափվելու անվայել թմրութիւնից» և այլն։

Ինչո՞ւ. միթէ նա իմ մէջ տեսնում է փոխանակ արուեստագէտի, քարոզչի՞ ճչվռում։ Գ. Բաշինջաղեան

—

չերը երկնքից նայում են ինձ։ Գիշերը անցնում է սև հանդերձի դուրալի խշխշոցի նման... Առաւօտը մօտենում է փայլուն յոյսերով... Ցրվում են իմ քնահաճ ցնորքները ու մեղմ զրնգում։ Սրտիս վախկոտ թռչնակները գիշերվայ հետ թռչում են։

Ու գիշերը թռչելով, հպարտ երգում է.

—«Ազատութիւն բառը կրկնիր, որպէս աղօթք, ու համարձակ՝ ընդառաջ գնայ կռւին»։

Առաւօտը կանչում է։

IV

ԼՈՒՍՆԵԱԿԻ ԼՈՅՍԸ

Երբ ննջում է ողջ աշխարհը, շողում է լուսինը պայծառ ոսկեայ ու խաւար լռութեան մէջ, ողջագուրում ու ծորում է սոխակի պաղատանքը։ Նա սիրոյ մոռացված ցնորքի համար է պաղատում ու լալիս... Եւ լոյսի արծաթագոյն ճառագայթների տակ հոսում են տեսիլքներն ու երազները։

Եւ երազները խմբերով շարժվում են խաւար երկնքի վրայով, հանդարտ խոնարհվում են նրանք քնածների գլուխներին։ Նրանց բառերը սահում են, որպէս խաղացող ալիքների ճղփիւնի մեղեդին...

Նրանք խաղաղեցնում են թմրութեան մէջ մոռացված հիւանդին, ցրում են սրտերի նոր ցանկութիւնները... Ահա երազանքները խոնարհվեցին մի երիտասարդ գլխի վրա։ Ճակատը այրվում, քրտինքը մարգարիտի հատիկների նման ծորում է ճակատով խիտ հիւսքի միջից։ Թերթերունքները դողում են, շուրթերը բաց են ու հանդարտ թոթովում են.—Աշխարհում ոչ մի իդէալ չէ եղել։ Կարեկցութիւնն է միայն... Մարդկութիւնը, հիւանդ մարդկութիւնը հառաչում ու դողում է խղճալի... Եւ նրան օգնել, կեանք պէտք է տալ... Աշխարհում իդէալ չէ եղել։

Եւ անշշուկ ծիծաղում են կախարդական երազանքները, երերվելով հազարագեղի ոստերի տակ։ Եւ ճառագայթապատ գլուխները խոնարհվում են ննջող անկողնի վրա և նրանց շշունջը սահում է, որպէս գիշերային միջատի թռիչքը, որպէս լուսնի տակ, ծաղկի շարժումը. և սահում է, սահում ու սահում...

—Կարեկցութիւն... այդ մոլորումն է, իսկ մոլորումներին դու երբէք մի հաւատայ։ Համարձակ բարձրացրու գլուխդ, նայիր վեր։ Նայիր վեր։ Այնտեղ թափառում են վեհ իդէալներ... Սովորիր հասկանալ ու յարգել նրանց, լցրու սիրտդ նրանցով... Իդէալները մարդկանց կեանք են տալիս, բարձրացնում են վեր։

— Աւելի ամուր են քայլերը, ուժեղ գլուխները, կարող ու եռանդով լի է կեանքերը այն մարդկանց, որոնք գլուխները վեր են բարձրացնում և չեն վախում ապրելուց...

Կարեկցութիւն... այդ ցանկութիւն է, իսկ ցանկութիւններին դու երբէք մի հաւատայ։ Արշալոյս Տէր-Յովհաննեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Գանձակ, 22 նոյեմբերի

Երէկ, կիրակի, նոյեմբերի 21-ին չը տեսնված շքով և հանդէսով սև հողին յանձնվեց Պետերբուրգի տեխնիկական ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանող Սամսոն Զաքարեանը։

Դեռ երեխայ ժամանակից զրկվելով խնամատար ծնող հօրից, բարի մօր հովանաւորութեան ներքոյ նա 1907 թ. աջողութեամբ աւարտում է Գանձակի գիմնազիայի դասընթացքը. յընթացս երկար տարիների նա իր ընդունակութիւններով, հեզ և բարի վարքով սիրվում է անխտիր բոլոր ուսուցիչներից և ընկերներից։

Աւարտման վկայագիրը ձեռքին, ապագայի պայծառ յոյսերով՝ երիտասարդ Սամսոնը սլանում է մայրաքաղաք, գիտութեան տաճարում կատարելագործվելու և աջող քննութիւն տալով մտնում է տեխնիկական ինստիտուտը։

Մայրաքաղաքում նա իր արտակարգ բարեմասնութիւններով աչքի ընկնելով ընտրվում է «Հայրենակցական ընկերութեան» բիւրոյի անդամ և այն օրից գիշեր-ցերեկ հանգստութիւն չունենալով իր մտածողութեան առարկան լինում է միայն աղքատ ուսանողութիւնը. նա ներկայացումներով և այլ միջոցներով աշխատում է օգնելու իր կարօտ ընկերներին։

Նրա մահը անսպասելի էր, քանի որ նա առողջ էր կազմով։ Հոկտեմբերի 16-ին հիւանդանալով, անդամահատութեան է ենթարկվում նոյեմբերի 6-ին, բայց 7-ին վախճանվում է։

Եկեղեցում փոխանորդ Լեոն վարդապետը մի երկար ճառով բացատրեց, որ Սամսոնի կորուստը միայն իր անմխիթար մօր և այլ հարազատներինը չէ, այլ բոլոր գանձակեցիների։ «Սամսոնը գնացել էր,—աւելացրեց հայր փոխանորդը,—հիւսիսային սառը մայրաքաղաքից բերելու լոյս, գիտութիւն՝ ապագայում ջերմացնելու համար խոպանացած մարդկային սրտերը, բայց աւաղ, ընդհակառակը, այսօր նրա սառը դիակն է հանգչում այս չոր դագաղում»։

Եկեղեցում և դուրսը ժողովրդի երկսեռ չը տեսնված բազմութիւն էր հաւաքվել. դագաղը եկեղեցուց մինչև գերեզմանատուն ուսերի վրա էր տարվում։ Ցուղարկաւորութեանը մինչև գերեզմանատուն մասնակցում էին քաղաքիս ամբողջ հոգևորականութիւնը և երկսեռ դասակարգից մեծ բազմութիւն։

Դագաղի վրա նախքան գերեզման իջեցնելը դամբանականներ խօսեցին՝ 1) Խարկովի համալսարանի ֆիզիկօ-մաթեմատիկական մասի ուսանող Արշակ Ջանփոլադեանը ռուսերէն, 2) ուսուցիչ Ց. Երիցեանը հայերէն, 3) ուսանող Եղիշէ Սարիբէկեանը ռուսերէն, 4) ուսանող Լևոն Լազարեանը ռուսերէն և 5) Գանձակի գիմնազիայի 8-րդ դասարանի աշակերտ Արշակ Մելիք-Ցովսէփեանը հայերէն՝ գիմնազիայի աշակերտութեան կողմից։ Բոլորն էլ գովասանում էին հանգուցեալի բարեմասնութիւնները։ Վերջում Ջանփօլադեանը, որի ճառը շատ մեղմ, ազդու և սրտաշարժ էր, կրկին առաջ անցաւ և կարդաց զանազան տեղերից ընկերների և այլ բարեկամների մխիթարական 10-ից աւելի հեռագիրներ։

10-ից աւելի պսակներ կային, որոնցից աչքի էին ընկնում հետևեալ մակագրութիւններով. 1) Незабвенному товарищу Самсону Михайловичу Захарянцу отъ студентовъ технологовъ армянъ; 2) Жертвѣ далекой чужбины дорогому Самсону отъ опечаленныхъ С.П.Б. Земляковъ; 3) Дорогому Самсону отъ товарищей Москвы, և այլ մասնաւոր համակրողներից։

Ապագայ հասարակական գործողի տենչով նա այսօր սառը գերեզման իջաւ տանելով իր հետ և այն մեծ յոյսերը, որ ունէին գանձակեցիները նրա վերաբերմամբ։

Գ. Ք. Թումանեան

ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

(Թեմական առաջնորդների ընտրութիւնը եւ «Պոլոժենիէն»)

II

Ես արդէն մատնացոյց էի արել, որ 1836 թւի «Պոլոժենիէն» շատ կէտերում պարտաւորեցնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին ղեկավարվել մեր եկեղեցու հնաւանդ կանոններով և օրէնքներով։

Ցայտնի բան է, այդ օրէնքներն ու կանոնները միմիայն այն ժամանակ պէտք է գործադրել, երբ նրանք բացէ ի բաց չեն հակասում տիրող պետական օրէնքներին, այլ լրացնում են այդ օրէնքների պակասը, կամ մեկնաբանում են նրանց այս կամ այն կէտերը, որոնք պարզ, կամ լրիւ չեն։

Հասկանալի է, որ եթէ այս կամ այն խնդրի վերաբերմամբ գոյութիւն ունի պետական օրէնք, ամենից առաջ պէտք է ղեկավարվել այդ օրէնքով։

Թեմական առաջնորդներին նուիրված է «Պոլոժենիէի» չորրորդ բաժանմունքը, որի 1169 յօդուածը ասում է.

«Հայ լուսաւորչական եկեղեցու թեմական առաջնորդները նշանակվում են Թագաւոր Կայսրից, այդ դաւանութեան բարձրաստիճան հոգևորականներից (изъ духовныхъ сановниковъ сего исповѣданія)»։

Անկասկած՝ այս է թեմական առաջնորդների ընտրութեան վերաբերեալ տիրող օրէնքը։ Ոչ մարմնաւոր կառավարութիւնը հրամայել է հրաժարվելու այս կանոնից, ոչ էլ մեր եկեղեցու պետի կողմից այժմս որևէ նկրտում կայ այս օրէնքը փոփոխելու, ինչքան էլ նա համապատասխան չը լինի մեր եկեղեցու դարաւոր ընտրական սկզբունքին։

Սակայն այդ յօդուածը չէ ամփոփում խնդրի ամբողջ էութիւնը։ Ոչ այս յօդուածում, ոչ այլուր «Պոլոժենիէում» չէ յիշված, թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսին է վերապահված թեկնածուներ առաջարկելու իրաւունքը, մինչդեռ դա անվիճելի է. 1836 թւականից սկսած՝ չէ պատահել և ոչ մի դէպք *), երբ Թագաւոր Կայսրը նշանակած լինի թեմական առաջնորդ առանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջարկութեան։ Եւ դա շատ հասկանալի է, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եկեղեցու պետ և ամբողջ հոգևորականութեան վրա բարձրագոյն վերահսկող է ճանաչված օրէնքից։ Այստեղ մենք գործ ունենք օրէնքի լոկ պատահական թերութեան հետ, մանաւանդ եթէ ի նկատի առնենք, որ նոյն «Պոլոժենիէի» 1140 յօդուածի զօրութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրաւունք ունի երկու թեկնածուներ առաջարկելու սինօդի անդամութեան, որոնցից մէկին Թագաւոր Կայսրը հաստատում է սինօդի անդամ։ Անշուշտ այս յօդուածի զօրութեամբ և անալօգիայով սրբագործված և հաստատված է այն պրակտիկան, որ թեմական առաջնորդութեան համար ևս Կաթողիկոսը առաջարկում է երկու թեկնածուներ, որոնցից մէկին Թագաւոր Կայսրը նշանակում է թեմական առաջնորդ։

Նոյնպէս հաստատված և անվիճելի է Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրաւունքը՝ թէ Սինօդի անդամների և թէ թեմական առաջնորդների արձակման վերաբերմամբ, որպիսի արձակում լինում է կայսերական հրամանով, համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջարկութեան։ Սակայն այս ամենակարևոր կէտերի մասին ևս «Պոլոժենիէն» լռութիւն է պահպանում։

Ահա այս է տրամաբանում տիրող օրէնքը թեմական առաջնորդների նշանակման և արձակման վերաբերմամբ։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկու թեկնածու է առաջարկում, որոնցից մէկին Թագաւոր Կայսրը նշանակում է նոր թեմական առաջնորդ և Կաթողիկոսի առաջարկութեան համաձայն հրաժարեցնում նախկին առաջնորդին։

Արդեօք որևէ կէտ այս օրէնքներից փոխված, կամ խախտված է Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Ժամանակաւոր Հրահանգով», կամ կոնդակով, կամ մի այլ կարգադրութեամբ։

Ամենևին ոչ. Կաթողիկոսի հրահանգը, կամ այլ կարգադրութիւնները բոլորովին չեն վերաբերվում այս օրէնքներին, որոնք անսասան են մնում։ Նրա կարգադրութիւնները վերաբերում են այն նախնական մոմենտներին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ինքը թեկնածու է որոնում ու ընտրում և վճռում է ներկայացնել Կայսրի հաստատութեան։

Այդ սկզբնական կարգադրութիւններում Ամենայն Հայոց Կաթողիկոսը լիովին ազատ է թեկնածուներ ընտրելու համար սահմանել այն ձևը, որը նա համապատասխան է գտնում մեր եկեղեցու դարաւոր կանոններին և նպատակայարմար ժողովրդի շահերի տեսակէտից, այսինքն ընտրական առաջնորդութիւն սահմանելը փոխանակ նախկին նշանակովի առաջնորդութեան։

Նորընտիր Կաթողիկոսը այդ փոփոխութիւնը հաստատելով, կամ սրբագործելով մեղանչած կը լինէր միմիայն այն դէպքում, երբ ապացուցվէր, թէ ընտրովի առաջնորդութիւնը թէ հակառակ է մեր եկեղեցու դարաւոր կանոններին և սովորութիւններին և թէ ինքն ըստ ինքեան վնասակար է մեր հասարակական շահերի տեսակէտից։ Անվիճելի է մի կէտ, որ նա չէ հակասում պետական օրէնքին։

Այժմեան կաթողիկոսութեան սկզբունքային հակառակորդները չեն համարձակվի պնդելու, որ ընտրովի առաջնորդը, կամ յաջորդը անծանօթ է հայոց եկեղեցուն, հակառակ է նրա ոգուն և հնաւանդ սկզբունքներին և վնասակար հասարակական շահերի տեսակէտից։ Ո՛չ. նրանք լաւ գիտեն, որ հայոց եկեղեցական իրաւագիտութիւնը չէ ճանաչում նոյնիսկ եպիսկոպոս առանց ընտրութեան և առանց թեմի. նրանք շատ լաւ գիտեն, որ Թիւրքիայում, անգամ Աբդիւլ Համիդի օրով, բոլոր թեմական առաջնորդները ընտրովի են եղել։ Նրանք չեն համարձակվի պնդելու, թէ ընտրովի առաջնորդը աւելի վատ է, քան նշանակովին։

Նրանց բոլոր յենակէտը 1836-ի «Պոլոժենիէն» է, նրա տառը և նրա ամենապակասաւոր յատկութիւնները, որոնց երբէք չեն համակերպվել մեր կաթողիկոսները։

Սակայն ընդունելով 1169 յօդուածի իմաստը, ես պնդում եմ, որ ոչ մի տեղ ամբողջ «Պոլոժենիէում» արգելք չէ դրված Ամենայն Հայոց Կաթողիկոսին սահմանել այնպիսի նախապատրաստական ընտրական մարմիններ, որոնք կոչված են իրանց ընտրական ձայնով կաթողիկոսին մատնացոյց անելու այս կամ այն թեկնածուին, երբ կաթողիկոսը այս խնդրում ցանկանում է իր հօտի ձայնին լսել և նրա հետ ձեռն ի ձեռն գործել։

Աւելին կասեմ. «Ժամանակաւոր հրահանգի» համաձայն թեմական առաջնորդի ընտրութիւնը շատ սահմանափակված է կաթողիկոսի կամքով. նրա 22-դ յօդուածում բացէ ի բաց ասված է, որ թեմական ժողովը ընտրում է կաթողիկոսից հաստատված ցանկից երկուսին իբրև թեկնածու («երկու թեկնածուի ընտրութիւն է անում»), որոնց ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին «օրինական ընթացք տալու», այսինքն գործադրելու տիրող օրէնքը ըստ «Պոլոժենիէի», պարզ է, որ թեմական ժողովը կաթողիկոսական ցանկից ընտրութիւն անելով ուրեմն ոչնչով չը հակասելով նրա կամքին և չը սահմանափակելով կաթողիկոսական իրաւունքները, օգնում է կաթողիկոսին ընտրութեան այն փազիսում, երբ նախկին կաթողիկոսները չէին ցանկանում լսել ժողովրդի կարծիքը, իսկ այժմեան Կաթողիկոսը կամենում է ղեկավարվել այստեղ ժողովրդի ձայնով։

Ի՞նչ փոփոխութիւն է սահմանվում այդ նոր ձևով։ Միակ փոփոխութիւնը այն է, որ նախկին կաթողիկոսները թեկնածուներ որոշելու և ընտրելու ժամանակ խորհրդակցում էին իրանց մերձաւորների և ֆաւօրիտների հետ, կամ շրջապատող անձնաւորութիւնների հետ, որոնք այսպէս թէ այնպէս կաթողիկոսին իրանց ձեռքն առած, պղտոր ջրում լաւ որս են բռնում։ Գէորգ կաթողիկոսի օրով այդ դերը ամբողջապէս խլացրել էր Մանկունին և կաթողիկոսին իր ձեռքում ժողոված՝ սակագին—մաղանդա էր նշանակել այլ և այլ պաշտօնների համար։ Սա հօ հանրածանօթ փաստ է։ Անպատկառութիւնը հասել էր այն աստիճանի, որ չը նայած ամբողջ հասարակութեան և նրա կարծիքի, մամուլի բողոքին և յուզմունքին՝ սակագինը հետզհետէ բարձրանում էր և մի անհատ պատահական parvenu թքում էր ամբողջ ազգի բողոքի վրա և խաղում նրա ճակատագրի հետ…

Մակար կաթողիկոսի օրով այդ դերը կատարում էին Սիմէօնեանը, Կ. Կոստանեանը և Նահապետեանը, իսկ Խրիմեանի օրով՝ նոյն դերը կատարում էր Խորէն Էֆէնդին։

Հարկաւոր է արդեօք թւել, թէ որքան անարժան, ապիկար, տգէտ, կաշառակեր ու թեմական արդիւնքները «իւրացնող ու վերացնող» առաջնորդներ ենք ունեցել։ Հարկաւոր է ասել, թէ որքան ազգը տուժել է այդ երևոյթից։

Այժմեան կաթողիկոսը ցանկանում է վերջ դնել այդ չարիքին։ Նա ցանկանում է, որ ժողովրդի ձայնով թեմական առաջնորդ ընտրվի։ Եթէ թեմական ժողովը վատ առաջնորդ ընտրեց, այլ ևս ոչ ոքի վրա չէ կարելի մեղադրանք ձգել։ Սակայն կաթողիկոսը ժողովրդի կամքին ևս սահման է դնում, որ նա խուժանական բնաւորութիւնը չը կրէ։ Թեմական ժողովը միմիայն կաթողիկոսին առաջարկած ցանկից պարտաւոր է ընտրութիւն անել։ Ընդարձակելով այսօր մեր եկեղեցու դարաւոր ընտրական սկզբունքը թեմական առաջնորդների և յաջորդների վերաբերմամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը միայն վերականգնեցնում է եկեղեցական օրէնքը և այն էլ այնպիսի ձևով, որ ոչ մի կողմով չէ մեղանչում պետական օրէնքի դէմ, չէ խախտում «Պոլոժենիէի» և ոչ մի յօդուածը։

Համոզված եմ, որ այս հարցում հայ ազգը, բացի խաւարամտական ոհմակից, ամբողջովին կաջակցէ իր Պետին։ Եւ սա կուսակցական հարց չէ, սա համազգային շահերի հարց է։

Ինչ վերաբերում է յաջորդների ընտրութեան խնդրին, այստեղ կառավարութիւնը լիովին ազատութիւն է տալիս և ինքը ամենևին չէ միջամտում։ «Պոլոժենիէի» 1190-դ յօդ. զօրութեամբ «յաջորդները նշանակվում են թեմական առաջնորդից», ինչպէս և 1204 դ յօդ. զօրութեամբ նոյն առաջնորդներից նշանակվում են քահանաներ «համաձայն նոյն եկեղեցու հնաւանդ կանոնադրութիւններին» (на основаніи древнихъ установленій Армяно-Григорьянской церкви)։ Այս հիման վրա էլ մեր քահանաները ընտրովի են, թէպէտ «Պոլոժենիէն» այդ մասին ևս լռութիւն է պահում, պահանջելով թեմական առաջնորդից, որ նա պահպանէ եկեղեցու հնաւանդ կանոնը, իսկ այդ հնաւանդ կանոնը, ինչպէս մենք գիտենք ամենքս, ընտրողական ձևն է։ Քահանային ընտրում է ծուխը և հաստատում է թեմական առաջնորդը։

Կար. Եաղուբեան

---

*) Մի դէպք է պատահել (Այվազովսկու), որը ահագին յուզմունք է յարուցել և դրանից յետոյ այլ ևս չէ կրկնվել։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

Պետերբուրգ, 24 նոյեմբերի

Նախագահում է իշխան Վոլկոնսկին։

Շարունակվում է պարտադիր ուսում մտցնելու կանոնների քննութիւնը։

Կլիուժևը, վերջացնելով նախընթաց նիստում սկսած ճառը և բերելով նշանաւոր մանկավարժների կարծիքները, պաշտպանում է պարտադիր ուսուցման անհրաժեշտութիւնը, գտնելով՝ որ օգնել ժողովրդին գրագիտութիւն սովորելու և դուրս գալու խաւարից դէպի Աստուծոյ լոյսը՝ հանդիսանում է ամենակենսական խնդիր, առանց որի իրականացման անհնարին է Ռուսաստանի զարգացումը ու բարգաւաճումը (ծափեր օպպօզիցիայում)։

Յօգուտ պարտադիր ուսուցման խօսում են Իւրկևիչը, Եանուշկևիչը։

Հակառակ խօսում է Մօսօվիլօվը, որ մատնանշում է՝ թէ Պետրոս Մեծի օրօք մտցված ընդհանուր ուսուցումը Եկատերինէ Կայսրուհու ժամանակ վերացվեց։

Պօկրօվսկի 2-դը գտնում է, որ ուսման պարտաւորութեան հարցը սխալ կերպով է դրվում։ Նախ պէտք է սահմանել ուսման ընդհանրութիւն և մատչելի դարձնել նրան ազգաբնակութեան համար, իսկ մեզ մօտ երեխաների 60%-ը մնում են դպրոցից դուրս, որովհետև կառավարութիւնը միջոցներ չէ տալիս ժողովրդական կրթութեան համար։ Երէկ բիւջէտային մասնաժողովի մէջ դա հաստատեց ժողովրդական կրթութեան մինիստրութեան ներկայացուցիչը, որ ասաց՝ թէ կառավարութիւնը պարտաւորութիւն չէ վերցնում ամեն տարի 10 միլիօն տալ տարրական կրթութեան համար։ Եթէ կառավարութիւնը փողեր ունի խմիչքեղէնի համար, Դուման պարտաւոր է ստիպել կառավարութեան գտնել 10 միլիօնը նախնական կրթութեան համար։ Վերջում հռետորը առարկում է Կապուստինին, որ խօսեց պարտադիր ուսման դէմ (ծափեր ձախից)։

Տիմօշկինը, իբրև կողմնակից յայտարարելով ընդհանուր ուսուցման, համաձայն չէ, որ տուգանք նշանակվի դպրոցից խուսափելու համար։ Ռուսական գիւղերում կան շատ ընտանիքներ, ուր երեխաները շոր չունեն հագնելու, ուստի պէտք է աղքատ դպրոցական երեխաներին զգեստ տալ և ոչ թէ տուգանք առնել նրանց ծնողներից։

Հայր Տիտօվը Ֆրանսիայի վիճակագրական տեղեկութիւններով և ուրիշ երկրների օրինակներով ապացուցանում է, որ Ռուսաստանին ևս անհրաժեշտ է ընդհանուր կրթութիւն։

Միլիւկովը պնդում է ընդհանուր կրթութեան անհրաժեշտութեան վրա, ընդգծելով ուսման պարտադիր լինելու և ընդհանրութեան սկզբունքների սերտ կապակցութիւնը։ Պարտադիր ուսման ղեկավարութիւնը յանձնվելու է տեղական ինքնավար մարմիններին։

Պետրով 3 րդ ասելով որ աշխատաւոր խմբակը ձայն կը տայ յօգուտ պարտադիր ուսման, ցանկութիւն է յայտնում, որ բոլոր տիպի դպրոցներում ուսումը լինի պարտադիր, դասաւանդութիւնը լինի ազատ, ազատութիւն տրվի մասնաւոր նախաձեռնութեան դպրոցներ բանալու գործում և լայն զարգացում ստանայ պրօֆեսիօնալ կրթութիւնը

Աջակողմեան հռետորներից մի քանիսի խօսելու ժամանակ դահլիճում բարձրանում է աղմուկ, որի առիթով նախագահը դիմում է Դումային հետևեալ խօսքերով.

«Առաջ քան զեկուցանողին խօսք տալը, թոյլ կը տաք ինձ ձեզ մի փոքր խնդիր ուղղել։ Այստեղ Դումայում հէնց որ որևէ մէկը սկսում է ոգևորված խօսել, այնպիսի աղմուկ է բարձրանում, որ ուղղակի անհնարին է գործ տեսնել։ Այնպիսի խօսքեր են թռչում մի կողմից միւսը, որ իսկապէս այստեղ տեղը չէ։ Կը պատմեմ ձեզ մի իրողութիւն։ Այս օրերս անցնելով փողոցով ես հանդիպեցի մի քանի բանւորների, որոնք իրար մէջ խօսում էին ինչ-որ ժողովի մասին։ Մինը հարցնում է. «Հը, ձեզ մօտ շատ աղմուկ էր ու հայհոյանք». իսկ միւսը պատասխանում է. «Ինչ՞, հօ Պետական Դուման չէ»… (Ծիծաղ մի քանի աթոռներում)։ Պարոններ, գուցէ մի քանիսին ծիծաղելի է, բայց ինձ համար ցաւալի է և շատ ամօթ»։ (Ծափահարութիւն բոլոր աթոռներում)։

Զեկուցանող Կօվալևսկին եզրափակում է։

Քուէարկութեամբ 12-րդ բաժինը ընդունվում է աննշան ուղղումներով։

Ընդմիջում մինչև երեկոյ։

Երեկոյեան նիստում եղան հարցապնդումների շուրջը վիճաբանութիւններ։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կովկասի Փոխարքան իր կողմից համաձայնութիւն է տուել գործադրելու Կարսի քաղաքային ոստիկանական վարչութեան ընդհանուր ժողովի որոշումը, որի համաձայն Գուբերնատորսկայա փողոցը Կարս քաղաքում վերակոչվելու է կոմս Վորոնցով-Դաշկովի անունով։

◆ Ինչպէս հաղորդում են լրագիրները՝ եկող տարվայ սկզբներում Նովոչերկասկում կը ձեռնարկվի «Դաշնակցութիւն» կուսակցութեանը պատկանելու մէջ մեղադրվող մօտ 500 հոգու հսկայական գործի քննութեան։ Բոլորն էլ մեղադրվում են քրէական պատժագրքի 102-րդ յօդուածով։ Այս գործի առիթով կանչվում են մօտ 1500 վկաներ։ Մեղադրական ակտը կազմում է մօտ 2000 մեծադիր թերթ։

◆ Առաջիկայ երեքշաբթի, նոյեմբերի 30-ին, «Alliance Française» ընկերութեան երեկոյթին Բօրսայի դահլիճում, ընկերութեան փոխ-նախագահ և «Մշակի» մշտական աշխատակից Առաքել Սարուխանը կը կարդայ ֆրանսերէն մի շահեկան ռեֆերատ՝ «Ֆրանսիայի հայագէտները» մասին։ Ռեֆերատից յետոյ տեղի կունենան վիճաբանութիւններ, իսկ ապա կը կայանայ գրական-երաժշտական երեկոյթ։ Սարուխանի այդ շահեկան ռեֆերատի հայերէնը անմիջապէս կը տպվի «Մշակի» մէջ։

◆ Երկրագործութեան գլխաւոր կառավարչի կովկասեան լիազօրը գլխաւոր վարչութեանը զեկուցագիր է ներկայացրել Կովկասի քաղաքացիական մասի անասնաբուժական մասի դրութեան և նրա կարիքների մասին։

◆ Նոյեմբերի 24-ին ձերբակալեցին Յակոբ Մելիք-Բախտամեանին և միևնոյն օրը ազատ արձակեցին։ Նոյն օրը խուզարկութեան ենթարկվեց Նիկողայոս Աբրահամեանի բնակարանն ևս։ Նա չէ ձերբակալված։ Բոլորի մօտից էլ տարված են գրքեր ու նամակներ։

◆ Ի նկատի ունենալով, որ «Մշակի» մէջ յարուցված հարցը դպրոցական առողջապահութեան մասին, իբրև շօշափող մի շատ կարևոր հարց՝ կարևորութիւն է ստացել շատերի համար, «Մշակի» վաղվայ համարում մենք կը տպենք բժշկապետ Վ. Արծրունու մի յօդուածը այդ հարցի մասին։

◆ Նոր նախագիծ է կազմված Թիֆլիսի գերեզմանատների մասին, որոնք այսուհետև լինելու են մի տեղում՝ քաղաքից 6 վերստ հեռաւորութեան վրա։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան գանձարկղում փող չը լինելու պատճառով, ծառայողները իր ժամանակին ռոճիկները չը ստացան։

◆ Ինչպէս լսել է «Н. Р.» լրագիրը, Գէօրգի և Ալէքսանդր Ռոմանովիչ Մրէվլօվները 5,000 ր. են նուիրել Վրաց Ազգագրական և Հնագիտական Ընկերութեանը հետևեալ պայմաններով. փողերը դրվում են Թիֆլիսի Գիւղատնտեսական բանկը, ըստ որում եթէ դրամագլուխը դառնայ 10,000 ր., նրանից գոյանում է անձեռնմխելի ֆոնդ բժիշկ Սողոմոն Մրէվլօվի անունով, որի տոկոսիքը գործադրվելու է գրքերի հրատարակութեան վրա։

◆ Այսօր լրանում է երեսուն տարի այն օրից, երբ առաջին անգամ Թիֆլիսում դրվեց ռուսական օպերա։ 1880 թ. նոյեմբերի 26-ին խաղացվեց «Жизнь за Царя» համաստարած օպերան, որը և կը դրվի այսօր Էյխենվալդի խմբի ձեռքով։

◆ Ներքին գործերի մինիստրը հրահանգով բացատրեց, որ վարակիչ հիւանդութիւններից մեռածների դիակների փոխադրութեան ժամանակ պէտք է ի նկատի ունենալ հետևեալ կանոնները. 1) վարակիչ հիւանդութիւնից մեռածի դեռ հողին չը յանձնված մարմինը ախտահանվում է բժշկի ցուցմունքով խլօրինային կրի լուծուածքով կամ ուրիշ միջոցներով և դրվում է մետաղեայ արկղի մէջ, որ անմիջապէս փակվում է, և 2) մետաղեայ արկղը դրվում է ուրիշ հաստ փայտեայ արկղի մէջ և երկուսի արանքներում ցանում են ածուխ։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բացատրեց, որ այժմ գոյութիւն ունեցող օրէնքի համաձայն, թեմական կանանց դպրոցների աւարտածները, նաև կադէտների կորպուսների սաները, կարող են ընդունվել ատամնաբուժական դպրոցներում. առևտրական դպրոցներ աւարտողները, որոնց իրաւունք չէ տրված թոյլ տալ իրանց սաներին համալսարան մտնել րէալական դպրոցների օրինակով, ինչպէս նաև այն անձինք, որ էկստերների իրաւունքներով քննութիւն կը տան 6-րդ դասարանների դասընթացքից կամ կադէտների կորպուսի լիակատար դասընթացքից, ատամնաբուժական դպրոցները մտնել չեն կարող։

◆ Վրաստանի էկզարխի կարգադրութեամբ թեմական միսիօնէր Պլատոնովը ուղարկվել է Սև-ծովի ափը հրապարակային կրօնական զրոյցներ և ընթերցումներ կազմակերպելու համար։

◆ Միսիօնէր Պլատոնովի դասախօսութեան ազդեցութեան տակ, կիրակի օրը լսողները յայտարարութիւն են ստորագրել Թեմական իշխանութեան անունով այն մասին, որ երիտասարդութիւնը պաշտպանելու են սինեմատօգրաֆիայի, փողոցային գրականութեան ազդեցութիւնից և այլն։

◆ Այսօր կը տօնվի ս. Գէորգ Բազմայաղթի շքանշանի տօնը, որի առիթով այսօր մաղթանք կը լինի Ալէքսանդրո-Նևսկիի զինւորական տաճարում։ Այդ տօնի առիթով այսօր Արտիստական Թատրոնում կը տրվի ձրի ներկայացում զինւորականների համար։

◆ Այսօրվանից ֆինանսական մասնաժողովը քննում է 1911 թ. Թիֆլիս քաղաքի ելևմտի նախահաշիւը։

◆ Որոնվում է 11 տարեկան Ֆէօդոր Նիկիտինը։

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրատունը արդէն սկսել է կամաց-կամաց տեղափոխվել իր նոր շինութիւնը։ Հին շինութիւնը դատարկվելու է մինչև դեկտ. 20-ը։

◆ Ստեփանեան ամուսինները ուղևորվում են Կարս, Ալէքսանդրապօլ և Երևան, մի քանի ներկայացումներ տալու նպատակով։ Ռեպերտուարը կազմված է հայկական ինքնուրոյն և թարգմանական պիէսներից։

◆ Պարզվում է, որ նոյեմբերի 13-ին և 14-ին Աստրախանի մօտերը, Կասպիական ծովի վրա, վերջին ծովային փոթորկի ժամանակ խեղդվել են մօտ 400 մարդ։ Ազատուել հնարաւոր է եղել միայն 160 հոգու։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Թիֆլիսի նահանգապետը տեղեկացնում է ոստիկանապետին, որ Թիֆլիսում, Նիկոլայէվսկայա փողոցում բացվել է Միքայէլ Հրեշտակապետի ընկերութեան բաժանմունք։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ Ալեքսանդր Մախլօվը ոստիկանութեան պահանջը չը կատարելու համար ենթարկվում է 25 ր. տուգանքի կամ 2 շաբաթով բանտարկութեան: Ոստիկանական զգեստ հագնելու համար ենթարկվում են տուգանքի՝ Սերգէյ Անտօնովը 50 ր. և Վասիլի Կուզնեկը 25 րուբլի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 18 նոյեմբերի

Մեծ Բրիտանիայի ծանօթ նօտան պարսկական կառավարութեան ներկայացվելուց յետոյ սկսվեց միտինգների մօդան ամենուրեք նաև Թէհրանում, որին յաջորդեց Թաւրիզի բազմամարդ միտինգը, որ տեղերում խօսվում են բոցաշունչ ճառեր պարսիկ հռետօրների կողմից, վճիռներ արձակվում ընդդէմ անգլօ-ռուսական համաձայնութեան, պահանջվում, որ Անգլիան իր նօտան յետ վերցնէ, որ կառավարութիւնները զօրքերը դուրս հանեն երկրից. և որ հիանալին է, ուղերձներ են մտածվում ուղղել մահմեդականների պաշտպան Վիլհէլմ կայսրին և Թիւրքաց սուլթանին՝ որպէս դաշնակից պետութիւնների, պարսիկ հռետօրների և քաղաքագէտների կարծիքով: Քաղաքական գիտութիւնների և հայեացքների մէջ տհաս, աւելի շուտ տգէտ հռետօրներն ու նրանց հետևող հասարակութիւնը երերվում են այս ու այն մտքի և կարծիքների մէջ, ու ընկնում, խաղալիք լինում մէկ սրա մէկ նրա ձեռքում: Նայած թէ ինչ ուղղութեամբ է փչում քամին:

Գերմանիայի և Աւստրիայի առևտրական տների ագէնտները, օգուտ քաղելով Պարսկաստանի այսօրվայ գերմանասէր տրամադրութիւնից, վխտում են երկրի վաճառաշահ կենտրոններում և հեղեղում շուկաները գերմանական ու աւստրիական ինդուստրիայի արդիւնքներով և մրցում ռուսականի հետ: Ո՞ւր կը հասնի իրերի ներկայ վիճակը, ինչ դրութիւն է սպասում Պարսկաստանին, աւելի շատ դժուար է. միայն տիրող անիշխանութիւնը, սուրն ու անվերջ թալանը, Ուրմիոյ և Սալմաստի գիւղերի վրա քիւրդերի կատարած արշաւանքները. միւս կողմից կառավարութեան անզօրութիւնը ցոյց են տալիս մեր տարաբաղդ երկրի դժոխային կացութիւնը ներկայի և անստոյգ ապագայի:

Վերջին տարիների յեղափոխութիւնը և նրան յաջորդող սահմանադրական կառավարութիւնը ոչ մի սպեղանի չեղաւ Պարսկաստանի մարմնի խոր-խոր վէրքերին: Կաշառակերութիւնն ու անարդարութիւնը աւելի մեծ չափեր են ընդունել, քան թէ առաջ՝ բռնապետութեան օրերում: Ամեն մի գործ, որ հասնում է պարսից դատաստանները ինչպէս նաև քեարգուզարիան, այնտեղերն էլ մնում ու փթում է, մինչև որ մի օր հրաշքով կամ արտաքին զօրեղ ազդեցութեամբ մի կերպ լուծում ստանայ: Թէ ինչ վիճակի մէջ են լինում անպաշտպան Թօյլերի բռնաբարված իրաւունքները, կարօտ չէ բացատրութեան: Գիւղատէրերի կեղեքումներն ու ճնշումները գիւղացիների վրա աւելի ուժգին թափով են գործ դրվում, քան առաջ էին:

Մակվայ Սարդար Իզբալ Սանթանէի ու նրա քրոջորդի Էքբէր խանի արարքները գրել էի «Մշակին»: Թեմական խորհուրդը մի գրութեամբ դիմեց Սարդարին խնդրելով, որ վերջ մէ իր խստութիւնները, Մակվա և Բիշմիշ-Թափայի բազմաչարչար հայերի վերաբերմամբ: Արդիւնքի մասին կը յայտնեմ իր ժամանակին:

Թաւրիզում հրատարակվող «Զանգ» և «Առաւօտ» շաբաթաթերթերը սկսել են միմեանց դէմ մղել մի շատ տգեղ պայքար՝ մանկավարժութեան քօղի ներքոյ: Մեր կողմից կը ծափահարէինք, եթէ արդարև հարցը վերաբերէր դպրոցական շահեկան խնդիրների լուծման. սակայն ո՛չ. նպատակն այդ չէ: Դրանցից առաջինը՝ Ղալա Թաղի ծխական ուսումնարանի և հոգաբարձութեան անուղղակի օրգանն է. երկրորդը՝ Հիլաւա Թաղի ծխական ուսումնարանի և ուսուցչական մարմնի ու հոգաբարձուների պաշտպանը. ասպարէզ են իջնել ամենավատթար զէնքերով, յախուռն հայհոյանքներով միմեանց վարչութեան անդամներին ու հաստատութիւնները վարկաբեկելու, յետին միջոցներով ի հարկէ: Մեր կողմից խորհուրդ ենք տալիս երկու ուսուցչական խմբերին ևս խուսափել այդպիսի անտեղի ուղղութիւնից և նուիրվել մանուկների դաստիարակութեան գործին. այդ է պահանջում հասարակութիւնը:

Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը դեռ ևս չը վերադարձաւ Թաւրիզ՝ Կովկասից. այսօր վաղն սպասվում է:

Ատրպատականի թեմական պատգ. ժողովը շարունակում է իր անպտուղ նիստերը: Թողած կարևորագոյն հարցերը զբաղվում է կողմնակի փոքր հարցերով. օրինակ՝ հետամուտ է մի յարմար տուն վարձել առաջնորդարանի անունով՝ հնի խարխուլ լինելու պատճառով. որոշումն է կայացրել առաջնորդարանի հին գործքերը ծախել ու նորերը գնել, և այսօրինակ գործերն են, որ գրաւում են մեր պատգամաւորներին, գործեր, որոնք աւելի շուտ թեմական խորհրդին են պատկանում:

Հիմնված թեմական ժողովի վճռի վրա, որ կենտր. Ուսումնարանի հոգաբարձութիւնը երկու տարի միայն շրջան ունենայ, յիշեալ ուսումնարանի հոգաբարձութիւնը ներկայացրել է իր հրաժարականը պատգ. ժողովին: Հետևանքի մասին դեռ ևս որոշ ոչինչ չը կայ: Առհասարակ կենտրոնականի հոգաբարձութեան գործելակերպից դժգոհ չէ հայ հասարակութիւնը. չը նայած քննադատելի թերութիւններից զերծ չէ կարելի համարել բոլորովին: Մեր իրականութեան հետաքրքրական կողմն այն է, որ թեմական ժողովը ձեռնհաս և գործունեայ չէ. գործերը կանգ են առել, առանց որ կարևոր խնդիրները ստանային բաւարար լուծում և հասարակութիւնը վաղ ուշ ազատվէր ժողովի անարդիւնք սալթանաթից:

Հայկազուն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Խօլերայով հիւանդ մնում են 10 մարդ:

Փակվեց տեղական անտեսութեան գործերի 5-րդ նստաշրջանը:

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ: Միխայլօվում մի գիւղացու տանը դիրք բռնած աւազակները սպանեցին մի պահակի, ծանր վիրաւորեցին պրիստաւին և ուրիշ պահակի: Աւազակները, թւով 3 հոգի, փախան, թողնելով 2 ռումբ և փամփուշտներ: Հրացանաձգութեան ժամանակ սպանվեց տանուտէրը. տունը հրդեհվեց:

ՎԱՐՇԱՎԱ: Ութ մարդ յարձակվեցին Լաբոր գործարանի գանձապահի վրա, ծանր վիրաւորեցին գանձապահին և ուղեկցին և կողոպտեցին 5,000 րուբլի:

ԻՕՀԱՆՆԻՍՏԱԼ: Օդագնաց Բրունգուբէրը մարդկանցով երկու անգամ թուիչք կատարեց և սահմանեց նոր մրցակէտ ճանապարհորդներով թռչելու:

ՏԱՆԺԷՐ: Սպարտէլ հրուանդանից դէպի հարաւ խորտակվեց մի նաւ և Սէուտից դէպի արևմուտք—անգլիական մի նաւ:

ԲԵՐԼԻՆ: Վախճանվեց նկարիչ պրօֆեսոր Լիւդվիգ Կնաուսը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի [illegible] օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.

Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ՉԻԼԲԵՐՇԱՑ—$12\frac{1}{2}$—$1\frac{1}{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ.:

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1\frac{1}{2}$—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՉԻԼԲԵՐՇԱՑ—6—$6\frac{1}{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—128

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, քթի, բկի, կոկորդի
հիւանդութիւններ,
Ընդունե- (Առաւօտեան 9—1 ժամը.
լութիւնը (Երեկոյեան 5—7 ժամը.
Վելիամինօվսկայա փ. № 13, տ. Մէլյանովի, 3-րդ գիմնազիայի կողքին:
(օ. մ.) 1227. 100—13

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:
Պրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից՝ Պարիզում:
Ընդունելութիւն (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՐԻՊԵՐԸ ԲԺՇԿԵԼԻ Է
Լոյս տեսաւ և ծախվում է
ՏՂԱՄԱՐԴԻ ՏՐԻՊԵՐԸ
ԵՒ
ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Կազմեց մէդից. ֆէլդշ. Ա. ԽՍԱՑԵԱՆ: Նկարներով: Գինը 20 կօպ. Պարունակում է մանրամասն խորհուրդներ և ըեցէպտներ տրիպէրից բժշկվելու: Անհրաժեշտ գիրք է բոլոր չափահասների համար: Ծախվում է նաև նոյն հեղինակի «Տղամարդի սեռական կեանքը», գինը 30 կ: Մնացել են սակաւաթիւ օրինակներ: Դիմել Թիֆլիս՝ «Գուտտենբէրգ», «Կենտրոնական» գրավաճառանոցներին և հեղինակին՝ Семеновская ул. № 9.
(օ. մ.) 1294. 5—3

ՁՐԻ տարածելու նպատակով ուղարկ. ենք իւրաքանչ. տղամ. համար շատ հետաքրքր. և օգտ. առարկայ: Ճանապարհածախք վճարվում է 10 հատի համար՝ 60 կ., 15 հատի համար 75 կ., 25 հատի համար՝ 1 ր.: Վերադիր վճարով 10 կ. թանգ: Չը հաւանած դէպքում փողը լրիւ վերադարձնում ենք: Միլիօնաւոր շնորհակալ. ենք ստանում: Հասցէագրել. г. ЛОДЗЬ, Т-ву „СЛАВА".

P. S. Միանգամայն հետաքրք. առարկայ՝ 10 հ.—1 ր.:
(ու.) (B. 80319) 1217. 23—5



ԹԱՏՐՈՆ ԻԼԼԻՒԶԻՕՆ

Եթէ Դուք կամենում էք ձերայինների և Ձեր բարեկամների հետ Ձեր ազատ ժամերն անցկացնել դուրեկան և օգտաւէտ, այդ դէպքում աւելորդ տեղից փող մի շռայլէք խաղալիք-իլլիւզիօններ ձեռք բերելու համար, այլ թէ բերել տուէք Բեռլինի մեր ֆաբրիկայի պահեստից ԻՍԿԱԿԱՆ կինէմատօգրաֆիական ապարատ, որի օգնութեամբ Դուք իսկապէս կարող էք սարքել կենդանի-շարժական պատկերների ներկայացումներ, այն է զանազան ականատես դէպքեր, դրամաներ, կոմէդիաներ, հրգիծարանական տեսարաններ և այլն: ՄԻԱՅՆ ՄԵՐ ԱՊԱՐԱՏՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ՄԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԱԶՔԻ ԵՆ ԸՆԿՆՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՊԷՍ ԻՐԱՆՑ ԱՄՈՒՐ ԿՕՆՍՏՐՈՒԿՑԻԱՅՈՎ, առաջացնում են ցանկալի էֆֆէկտ՝ տալով պարզ նկարներ էկրանի վրա՝ 2×2 արշ. մեծութեան, առանց ճպումների: Պահեստում մշտապէս ունենք մեծ քանակութեամբ ամեն տեսակ բովանդակութեան ժապաւէններ: Ամենից հետաքրքրականներն են. ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-ի ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԵՏ: Պատկերներ Հին և Նոր Ուխտի Սրբազան Պատմութիւնից: ԿՈՄՍ ԼԵՎ ՏՕԼՍՏՕՅԸ ՅԱՍՆԱՅԱ-ՊՕԼԵԱՆԱՅՈՒՄ: Ծավէի թռիչքը և աէրօպլանի խորտակումը: Համաշխարհային ցուցահանդէս Բրիւսէլում, և ուր. շատերը: Ի նկատի առած մեր ապարատների բարձր յատկութիւնը՝ նշանակվում են առասպելական էժան գներ.—Ապարատ „ԻՒՆՕ" իր բոլոր պատկանելիքներով՝ „Իսկրա" լամպով, րէֆլէկտօրով, 4 երկար ժապաւէններով, 250 պատկերներով—8 ր. 25 կ.: Այդ ձևի ապարատ՝ «ԻԴԷԱԼ», մեծ դիրքով, ամենալաւ օբիէկտիվով և շատ շքեղ, 3 զանազանագոյն և 3 լուսանկարչական ժապաւէններով, «Դիանա» լամպով—13 ր. 50 կ.: Ապարատ «ՀԵՐԿՈՒԼԷՍ» ամենամեծ տիպի, երկու անիւներով 300 արշ. երկարութեան ժապաւէնների համար, մեխանիկական օբիէկտիվով, 5 օպտիկ ապակիներով, «Բլէսկ» յայտնի լամպով, 6 հատ բազմագոյն եւ 6 հատ լուսանկարչական ժապաւէններով, Էդիսսօնի պէրֆօրացիայով—28 ր. 50 կ.: Պահեստի ժապաւէնները՝ 75 կ., 1 ր., 1 ր. 25 կ. եւ 2 ր. հատը: Ճանապարհածախք եւ մաքս հաշվում է 1 ր. 50 կ.: «Հէրքուլէս» ապարատի համար 2 ր. 50 կ.: Ասիական Ռուսաստան 1 ր. թանգ: Պատուէրներով (կարելի է ռուսերէն լեզուով) դիմել. Торг. Дому Х. ФИНКЕЛЬШТЕЙНЪ. ГЕРМАНІЯ, Берлинъ, ул. Кантъ, 120—29. Exporthaus H. FINKELSTEIN. BERLIN, Kantstr. 120—29.

Պատուէրների արժէքի $\frac{1}{4}$ մաս կանխավճար ուղարկողները ստանում են իբրև պրէմիա պարիզեան ժանրով գեղարուեստական 100 հատ բացիկներ:

(B. 90130) 1305. 1—1

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԷՆ ԿՈՊԵԿԱՆՈՑ ՕՐԱԹԵՐԹ

1 ԿՈՊ. „ԿԱՅԾԵՐ" 1 ԿՈՊ.

◆ Պարունակում է իր մէջ մեծ օրաթերթերի բոլոր բաժինները ◆

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1911 Թ.

Տարեկան գինը 3 րուբլի, ճանապարհածախսով 3 րուբլի 50 կ., մէկ ամսվանը 30 կոպէկ: Այժմեանից բաժանորդագրվողները «ԿԱՅԾԵՐԸ» կը ստանան նաև այս տարի առանց բաժնեգնի յաւելման:

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԷՆ ՏԵՂ 1 ԿՈՊ.

Խմբագրատան հասցէն՝ Тифлисъ, Эриванская площадь № 7.
Լոյս է տեսնելու ԱՅՍՕՐՎԱՆԻՑ ամեն օր ժամը 3-ին:
(ու. կ. հ.) 1318. 3—1

ԲԱՑՎԱԾ Է 1911 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XXIX ՏԱՐԻ **ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ** XXII ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Տարեկան բաժանորդները ստանում են.

I. ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը «Մանկական Աշխարհ» յաւելուածով:
II. ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէսը «Թատրոն և Երաժշտ.» յաւելուածով:
III. ԱՌՈՂՋԱՊԱՀ պատկերազարդ ամսաթերթը «Հոգու և Մտքի առողջութիւնը» յաւելուածով:
IV. ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ III և IV պրակները:
V. ԳԵՂԱՓՆՋԻԿ ՕՐԱՑՈՅՑ 1912 թ.:
VI. ԱՐՕՁԱ, Fantasie իրականութիւնից:
VII. ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ, շքեղ նկար ապակեայ պատրաստ շրջանակով, յարմարեցված թէ սեղանի վրա դնելու և թէ պատից կախելու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՂԲԻՒՐ տարեկան 3 ր., (Արտասահման 5 ր.) Դպրոց. աշակ. հասցէով 1 ր.
ԱՌՈՂՋԱՊԱՀ » 2 ր. (Արտասահման 3 ր.) » » » 1—50 կ.
ԱՂԲԻՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀ 5 ր. (Արտասահման 7 ր.) » » » 2 ր.—
ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ, ՏԱՐԱԶ, ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ ԳԵՂԱՓՆՋԻԿ ՕՐԱՑՈՅՑ ԱՐՕՁԱ, ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ Բոլոր յաւելուածներով և պրէմիաներով { 10 ր. ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 18 ր. կամ 50 ֆր. 5 Դպրոցակ. աշակեր. համար ՀԻՆԳ Ր.

Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չէ ընդունվում:
Այն դպրոցները, որ 50 բաժանորդ կը տան «Աղբիւրին», նրանց կուղարկվի 5 օրինակ «Աղբիւր» չքաւոր աշակերտների համար:
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ" կամ „Таразъ".
Tiflis (Caucase) Direction „Agbür" կամ "Taraz".
Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ
(Ե. ու.) 1234. 0—8

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են հետևեալ նոր ստացած գրքերը.

Աշէրօն.—«Գիւղատնտեսական հրատապ հարցերը»	— 20 կ.
Ահարոնեան.—«Խաւարի մէջ»	— 60 »
» «Մոխիրների տակից»	— 40 »
» «Անդունդը».	— 40 »
Այվազեանց Բ.—«Անիի կործանումը»	1 ր. — կ.
Աղայեան, Ահարոնեան, Թումանեան և Փափազեան.—«Հայ գրողներ», Ա. հատոր՝ 2 ր., Բ. հատոր	2 ր. —
Բօլշէ Վ.—«Մարդու ծագումը»	— 40 »
Գալաչեան.—«Կօօպերացիա» մաս I.	— 20 »
Եսայեան.—«Տրիպէրը և նրա բժշկութիւնը», պատկեր.	— 20 »
» «Տղամարդի սեռական կեանքը»	— 30 »
Նկարիչ.—«Խելքի տոպրակներ», վերցվել իրական կեանքից	— 30 »
Շէրենց Գ.—«Այթուն Դէրէսի կամ մի գիշեր Բաղէշի բանտում» 1890—96 թ.	— 20 »
Համոնդ.—«Երիտասարդութեան մեղքերը, սեռական անզօրութիւն տղամարդկանց և կանանց», նկարներ.	1 ր. —
«Տաարակ Տարօնոյ», ազգային երգարան	— 60 »
Իսահակեան.—«Ժողովուրդը ժողովրդական լէյէնների մէջ»	— 10 »
Կուկունեան.—«Վերջին օրերս Սախալինում»	— 30 »
Կլէյն.—«Գործնական կաթնատնտեսութիւն», 48 նկարներով	— 50 »
Մուրադեան Մ.—«Սիֆիլիս», պատկերով	— 80 »
Յովհաննիսեան Գ.—«Բանաստեղծութիւններ»	1 ր. 50 »

Օտար քաղաքներից դիմել՝ Тифлисъ, Центральной книжной торговлѣ.

Պահեստ էլեկտրական «ՍԻՐԻՈՒՍ» լամպերի, որոնք տալիս են 70% խնայողութ.: Ֆիրման ընդունում է էլեկտրական հաղորդիչներ կառուցելու և պատրաստելու պատուէրներ: Էլեկտրական զանազան զարդարանքների ահագին պահեստ: Էլեկտրական մշտապէս գտնվում է ամեն տեսակ լամպերի մեծ պաշար: Օտար քաղաքների պատուէրները կատարվում են անմիջապես և ճշտութեամբ:

ԼԱՄՊԵՐԻ, ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԵՒ ԿԱՀԿԱՐԱՍԻՔԻ ԴԵՊՕ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Թիֆլիս, Դվօրցօվայա փողոց: Տէլէֆօն № 238: Ֆիրման գոյութիւն ունի 1869 թւից:

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԿԵՐՕՍԻՆԻ ՇԻԿԱՎԱՌ ԲԱՑՎՈՂ

ԼԱՊՏԵՐՆԵՐԻ





արտաքին և ներքին լուսաւորութեան համար:

ՎԱՌՎՈՒՄ ԵՆ ԻՆՔՆԱՇԱՐԺ ԿԵՐՊՈՎ ԵՒ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ առանց պատրոյգի, առանց էլեքտր. թելերի և օդահանի:

Ամենայարմարագոյն լուսաւորութիւն

գրասենեակների, կրպակների, կայարանների, արհեստանոցների, բակերի համար և այլն:

ՎԱՌ-ՃԵՐՄԱԿ, ՈՒԺԵՂ, ՓԱՓՈՒԿ ԵՒ ԴՈՒՐԵԿԱՆ ԼՈՅՍ
300-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1500 ՄՈՄԵՐԻ ՈՅԺՈՎ.

ԼԱՄՊԵՐԸ ՎԱՌՎՈՒՄ ԵՆ ՆԵՐՔԵՒԻՑ ՑԱՆՑԵՐԻ ՄԷՋ ՆԵՐՓԱԿՎԱԾ:

Ամենահասարակ հոգացողութիւն և էլեքտրականութիւնից 75%-ով էժան է նստում:

ՎԱՌՎՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՑ ՁԱՅՆԻ, ՀՈՏԻ ԵՒ ՍԱՀՈՒՆ ԿԵՐՊՈՎ:

Պատենտները բոլոր երկիրներում հաստատված են:



ՍՏԱՑՎԵԼ ԵՆ

ԿԵՐՕՍԻՆԱՎԱՌ ԽՈՀԱՆՈՑՆԵՐ

ՆՈՐԱԳՈՅՆ «ՉԷՄՊԻՕՆ» ՍԻՍՏԵՄԻ, ԱՄՈՒՐ ԵՒ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ:

Կատարելագործվ. կերօսինավառ վառարաններ

Գրասենեակներ, մագազիններ, բնակարաններ, զօրանոցներ և այլն տաքացնելու:

ՆՈՅՆՊԷՍ ԿԱՅ ԿԵՐՕՍԻՆ-ՇԻԿԱՎԱՌ, ՆԻԿԵԼՈՎ ԾԱԾԿՎԱԾ

ԼԱՄՊ „ԿՈՒՆԻՕՐ"

750 մոմի լոյսի ոյժով, օժտված ուժաչափով և օդահանով: Յարմար է թամբի, կրօնշտէյնի և 30 կայծագծերով լամպերի կերանների համար:

Գինը 16 րուբլուց սկսած:

1177. 10—7

Типографія „Экономія", [illegible]